

ՀԱՅԿԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ՏՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

# Ազգային Պատրիարքարանի

ՏՅԻՒՎ ՂԵՍՄ

ԱՍԵՆ ԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԳՐԱԳՐԱԿԱՆ 1881 ՎԱՐՆ

ՆՒՍ Զ

27 ՕԳՈՍՏՈՍ 1881



Կ. ՊՕԼՈՍ

1881

**ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ**

Վարդապետական Գործարարական Սեկցիոն

ՄԱՅԻ ԴԻԻԱՆ

Յ. Մերեմեմ-Գուլի էֆենտի	Ա. Արեւապետ
Առաքել էֆենտի Ալթուն Տիրրի	Բ. »
Գրխատուուր էֆենտի Ղազարոսեան	Գ. »
Միհրան էֆենտի Չոպանեան	Ա. Արեւապետ
Նշան էֆենտի Պոյաճեան	Բ. »
Տիգրան էֆենտի Հիւնքեարպէյէնեան	Գ. »

Ձեռնասուրբեան դիւան	Յարաբերութեան դիւան
Տ. Մատթէոս եպիս. Իգմիրլեան	Յարութիւն էֆենտի Նորատունկեան
Տ Գէորգ Մ. Վարդ. Բուսճուզլեան	Ալիքսան էֆենտի Խորատանճեան
Պապի էֆենտի Պապօեան	Ղազար էֆենտի Հովուեան
Դաստիակութեան դիւան	Իրաւասութեան դիւան
Ռեթէոս էֆենտի Պէրպէրեան	Եղիշէ վարդապետ Այվաղեան
Լէւոն էֆենտի Դափամանճեան	Կառնիկ էֆենտի Յովակիմեան
Դասպար էֆենտի Չերազ	Աւետիս էֆենտի Պէշիրեան
Կալուածոց դիւան	Նախաձեռնութեան դիւան
Գրխատուուր էֆ. Ղազարոսեան	Առաքել էֆենտի Ալթուն-Տիրրի
Արրահամ էֆենտի Մուրատեան	Նշան էֆենտի Պոյաճեան
Մատթէոս էֆենտի Ալիքսանեան	Յովհաննէս էֆենտի Թորոսեան
Համարակալութեան դիւան	Խմբագրութեան դիւան
Յակոբ էֆենտի Արշակ	Կարապետ էֆենտի Խլթիւճեան
Ստեփան էֆենտի Փափազեան	Աւետիս էֆենտի Սուրենեան
Յակոբ էֆենտի Հաճեան	Մկրտիչ էֆենտի Մէղպուրեան

Ելիւմից յանձնախումբ  
1881

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՂ**

ԲԱՅՈՒՄ 1881 ԱՄՍ


**Ն Ի Ս Տ Զ.**

27 ՕԴՈՍՏՈՍ 1881

ՆՈՒՍԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր  
ԱՏԵՆԱՊԵՏ. — Յարութիւն էֆենտի Մերեմեմ-Գուլի

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Ա. Վիճակ	ԳՈՒՄԳԱՐՈՒ, ԿԵՏԻԿ ՓԱՂԱ ԵՆ ԳՈՒՄԳԱՐՈՒԻ ԴՈՒՐԱ	47 Աւետիս Տէր Սահակեան Բ 2
1 Կարապետ եպս. Սերոբեան Բ		21 Գրիգոր Պէրպէրեան	48 Խակիւտար Ս. Կարապետ
2 Սիմոն եպս. Սէֆէրեան		22 Կարապետ Աղարդմանեան	49 Միհրան Պահճէղափուլն Բ 3
3 Ամբրոսիոս վ. Ռուբինեան Բ Պ		23 Համբարձում Մաղպուլեան	50 Պողոս Թորգոմեան Բ
4 Կարապետ Բ. Սէթեան Բ	Բ. Վիճակ	24 Մինաս Գափամանճեան Բ	51 Տրդատ Փափազեան Բ
5 Մատթէոս եպս. Իգմիրլեան Բ		25 Սարգիս Աղարկեան Բ Պ	52 Յակոբ Հաճեան
6 Պողոս վ. Խօշտամեան Բ Պ		26 Սենեքերիմ Մանուկեան Բ 2	( Գ. Վիճակ )
7 Յովհաննէս Բ. Մկրտեան		27 Բարթող Գիւրքէիպաշեան	Գասքմ բաշա
8 Գրիգոր » Աճէմեան Բ 3	Գ. Վիճակ	28 Գէորգ Ապուլլահեան Բ Պ	53 Դասպար Չերազ Բերա
9 Գրիգոր եպիս. Տ. Պողոսեան Բ 2		29 Յ. Մերեմեմ-Գուլի	54 Արիկ Ունճեան Բ
10 Յակոբ վ. Ա. Փափազեան Բ		30 Տիգրան Հիւնքեարպէյէնեան Բ Պ	55 Գրիգոր Սէլիմիէճեան Բ
11 Սահակ Բ. Տ. Սարգսեան Բ Պ		31 Աւետիս Սուրենեան	56 Գրիգոր Օսեան Բ Պ
12 Խորէն » Փէշիրլեան	Գ. Վիճակ	32 Տօբթ. Յ. Թիրեաքեան	57 Ղազար Հովուեան
13 Գէորգ վ. Բուսճուզլեան Բ		33	58 Յարութիւն Նորատունկեան Բ
14 Եղիշէ » Այվաղեան		34	59 Յարութիւն Պէկեան
15 Յովհաննէս վ. Արշարունի		35	60 Նշան Պոյաճեան Բ
16 Յովհաննէս Բահ. Հիւնքեարք պէյէնեան		36	61 Վիշէն Օրմանեան Բ
	Ե. Վիճակ	37	62 Տէլէմաք Էքսէրճեան Բ Միջազիւղ
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ			63 Յակոբ Պ. Նորատունկ Բ 2
18 Յովհաննէս վ. Փափազեան			64 Տիգրան Եռուտիֆեան
19 Գարեգին » Թաթարեան Բ			65 Մկրտիչ Գազանճեան
20 Սուրբաս Քահ. Ստեփանեան			66
	Բ. Վիճակ		67
Բ. Բացակայութիւն առաջին		38 Ալիքսան Խորատանճեան Բ	Պէյգօզ Եւ. Ղարափա
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ		39 Բարսեղ Հալաճեան Բ	56 Միքայէլ Մամիկանեան
Բ. 3 Բացակայութիւն երրորդ		40 Յովհաննէս Փէրէստէճեան Բ Եկեղիցաբոս	( Գ. Վիճակ )
		41 Լեւոն Քարամանճեան Բ	Քուզիլուճուզ Եւ. Իճատիէ
		42 Մարուզէ Յրէնկեան	70 Գրիգոր Ներսէսեան Բ
		43 Պողոս Էքսէրճեան Բ	70 Մկրտիչ Մէղպուրեան Բ
		44	
		Խակիւտար Ս. Խաչ	
		45 Սիմոն Յէլէկեան	
		46 Տօբթօր Յ. Շիշմանեան Բ Պ	



Գատրգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան		121 Ստեփան փափաղեան Բ
72 Կարապետ Հաղարեան Բ Պ	Կարից	Տիվրիկ
Նարյըգաբու	101 Սերովբէ Ազնաւորեան	122 Նշան Գարազաշ
73	Քորանեա	Զէյրուց Է. Մարաշ
Եհնիմանայի Սամարիոյ	102	123
74	Անդրիանուպօլիս	Տրապիզօն
Թօփգալիու:	103 Յակոբ Պարոնեան Բ	124 Չ
75 Տ. Կ. Հիւնքեարպէյնեան Բ	սվրնիկիս	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	104 Կարապետ Ս. Իւթիւճեան Բ	125 Մելքօն Իսկէնտէրեան
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76	105	126 Մինրան Զօպանեան
Գուրուչէլմե	Ղարանիսար	Վան
77 Համբարձում Իբէքճեան	106	127
Հիսար Է. Պօյաճի գիւղ	Արաբկիր	Աղբամար
78 Սենեքերիմ Կիւլպէնկեան	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր գիւղ Է. Սրէնիս	Բաղէշ	Հալեպ Է. Այնքապ
79	108	129
Պալատ	Պրուսա	Սեբաստիա
80 Սահակ Ղազարոսեան Բ	109 Քրիստոստուր Ղազարոսեան Բ 2	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան Բ
81 Տիգրան Բարաղամեան	Եղոկիս	Ռուսձուգ
82 Մկրտիչ Կիւմրուչեան	110	131
Քարակեօմրիկ	Ամասիա	Կարս
83 Յովհաննէս Թորոսեան	111 Համբարձում Ալաճաճեան	132 Աբրահամ Յ. Այլաղեան
84 Կարապետ փանոսեան Բ	Բայու	Զմշկածագ
( Ե. Վիճակ )	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ	133
Սամարիս	Եղեսիա	Գաղատիս
85 Ալիքսան Պէշիբեան Բ	113 Յակոբ Իւթիւճեան Բ	134
86 Եղիազար Մէլիքեան Բ Պ	Մանճրլիս	Ատանա
87 Մինաս Ճաֆճաֆեան Բ	114	135
88 Նազարէթ Շահպաղեան	Հանըն	Սղերդ
89 Յարութիւն Թիւլեան	115	136 Մատթէոս Ալէքսանեան
90 Յակոբ Արշակ Բ	Երզնկա	Եօզղատ
91 Սեպուհ Թիւլիւղեան	116 Ռէթէոս Պէրպէրեան Բ 2	137 Լօղօֆէթ Պալեօզեան Բ Պ
92 Մինաս Էմիրեան	Թէքիրտաղ	Մալաթիա
93 Վիլէն Գապառաճեան Բ	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորգ Վարդանեան Բ
94 Թազուր Երկանեան	Կեսարիա	Իզմիր
Խասգիւղ	118 Գէորգ Գըլքճճեան	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրրի	Խարբերդ	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան Բ	119	140 Աբրահամ Մուրատեան Բ 2
97 Սարգիս Քալուքճեան Բ Պ	Պալքրեաեր	
98 Ռէթէոս Թաղէսեան		
99 Ռուբէն Պուլիուրեան		
400 Նիկողոս Թիւլպէնտեան	120 Ստեփան Գօլօլեան	

# Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Մրադիր թաղային մատակարարութեան օրինաց. — Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Տեղեկագրի Ատենապետաց Դիւանի:

Ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Ատենապետ Յ. Մէրեճմ-Գուլի Էֆէնտի առեանը կը բանայ ժամը 4 ին, ի ներկայութեան 40 Երեսփոխանաց, որոց թիւը 48 ի կը յանգի ի վերջէ:

Ատենապետ Էֆէնտի կը յայտնէ որ, Ա. Ատենադպիր Էֆէնտի թէ և հիւանդ՝ եկած է Դիւանին վերաբերեալ թղթերն յանձնելու համար, բայց սարտուորեալ է մեկնիլ՝ անձին տկարութեան պատճառաւ. Բ. և Գ. Ատենադըպիր Էֆէնտիներն ալ տարբեր պատճառներով բացակայ են այսօր, որով Դիւանն առանց Ատենադպրի մնացած է: Հետեւաբար կտուջարկէ որ կրտսերագոյն Երեսփոխաններէն մին բարեհաճի առժամեայ Ատենադպրի պաշտօն վարել:

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Օրինական բացակայութիւն.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երեսփոխան Կարապետ Էֆէնտի Հաղարեան ծանուցած է գրով թէ ճամբորդութեան պատճառաւ բիջ մ'ատեն բացակայ պիտի գտնուի: Սոյն բացակայութիւնն՝ ըստ որում օրինաւոր՝ կը նշանակուի ներկայութեան տուճարին մէջ:

2.

Ընդունելութիւն նախընթաց շրջանի ԻԱ. Է. Երկայ շրջանի Ա. Է. Բ. նստերու աւտենագրութեանց.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ շրջանի վերջին ԻԱ. նստի և ներկայ բացման Ա. Բ. և Գ. նստերու աւտենագրութիւնները տպուած և

Սոյն հրաւիրանաց վրայ Զերազ Գասպար Էֆէնտի կանցնի ի Դիւանն, և առժամեայ Ատենադպրի պաշտօն կը վարէ:

հաղորդուած են Երեսփոխանաց, զորս կարգաւ Ձեր ընդունելութեանը կենթարկեմ այժմ:

3.

Հրատարականք

Ժողովը նախորդ շրջանի ԻԱ. նասի նաև ներկայ շրջանի Ա. և Բ. նիստերու ատենագրութիւնները կը վ.Ա.Ի.Բ.Է. ատանց գիտողութեան:

Իսկ Գ. նիստի ատենագրութեան վրայ Ա. Աղնաւոր Էֆէնտի խօսք կառնու:

ԱԶՆԱՒՈՐ Ս. ԷՖ. — Այդ նասի ատենագրութիւնն, որովհետև այս առաւօտ ստացանք աչքէ չկրցինք անցնել, ուստի կառաջարկեմ որ անոր վաւերացումն յետաձգուի:

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, կը ձայնակցիմք:

ԹԻՒՂԵՆՏՃԵԱՆ Ն. ԷՖ. — Յետաձգելու ըստ իս պատճառ մը չեմ տեսներ, որովհետև այդ ատենագրութիւնը գրեթէ միայն ընտրական տեղեկագրերու վաւերացումէ կը բաղկանայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ բաղձնաթիւ Երեսփոխանք Աղնաւոր Էֆէնտի ատաջարկութեանը կը յարին, և քանի որ այդ ատենագրութիւնն ընտրական տեղեկագրերէ զատ կը սարունակէ նաև Երեսփոխանաց խօսքերը, հարկ կը տեսնեմ բուէի դնել յետաձգման ատաջարկութիւնն:

Ժողովը Աղնաւոր Էֆէնտի ատաջարկութիւնն ընդունելով Գ. նասի ատենագրութեան վաւերացումը կը թՈՂՈՎ յաջորդ նասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մի բանի հրատարականներ կան, զորս Ձեր նկատառմանը կը ներկայեմ:

Պոյաճեան Նշան Էֆէնտի Բ. ատենագրութեան, Ունճեան Աբիկ Էֆէնտի Երեսփոխանութեան, և Փափազեան Ստեփան Էֆէնտի Հրատարակութեան Գիւանի անդամակցութեան պաշտօններէն կը հրատարին:

Ահաւասիկ իրենց հրատարագրերը.

Հրատարական Ս. Փափազեան Էֆէնտի

Մեծաշուք տէ՛ր

Երէկ երեկոյ ստացայ Կեդր. Մատուկի 80-81 տարւոյ հաշուեկշիռն, զոր ատաջարակալութեան Գիւանն յղած էիք ի նախաքննութիւն:

Կը ցաւիմ որ չպիտի կրնամ դործակցիլ այդ քննութեան, քանզի պարտաւորեալ եմ հրատարիլ Համարակալութեան Գիւանէն: Ուստի առ Ձեզ կը դարձնեմ նոյն հաշուեկշիռն, խնդրելով որ շնորհ ընէք յղել զայն առ միւս անդամն Գիւանին, և Ազգ. Ժողովոյ յառաջիկայ նիստին մէջ ուրիշի մ'ընտրութիւնն ատաջարկել փոխանակ իմ, որպէս զի գործերն ետ չմնան:

Ողջունիւ յարգանայ

Մնամ Խ. Մ.

Ս. Պ. Պ. Փափազեան

6 Օգոստ. 1881

Հրատարական Ն. Պոյաճեան Էֆէնտի

Վսեմապատիւ Ատենապետ Էֆէնտի Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Բաց ի ազգային ուրիշ պաշտօնավարութենէ գլխաւորապէս անձնական ըզբաղմանց բեռան տակ ճնշեալ կը պարտաւորիմ Ընդհ. Ժողովոյ Մայր—Դիւանի երկրորդ Ատենագրութենէ հրատարիլ և մատուցանել ներկայիւս իմ հրատեչտս ի սոյն պաշտօնէ, խնդրելով որ բարեհաճիք ընդունիլ զայն և ընդ նըմին անկեղծ յարգանացս խորին հաւատին:

Նշան Պ. Պոյաճեան

14 Օգոստ. 1881 ի Ղալաթիա,

Հրատարական Ունճեան Աբիկ Էֆէնտի

Սրբազան Հայր,

Անձնական զբաղմունքս կատարելն զիս ակամայ հրատարիլ Ազգային Երեսփոխանական պաշտօնէս:

Ուստի, խնդրեմ, Սրբազան Հայր, որ սոյն հրատարականս ներկայել Պատկառելի Ժողովոյ հաճիք, ընդունելով ամենախոնարհ ծառայական յարգանքս,

Որով մատչիմ ի համբոյր Ս. Աղայդ և մնամ միշտ անձնուէր

Աբիկ Ունճեան

26 Օգոստ. 1881

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս հրատարագրերը Ժողովոյ ներկայացնել յետոյ, հարկ կը հա.

մարիմ իւր վճարն ենթարիւլ զայն: Ուստի Փափազեան Էֆէնտի հրատարականն սխեւով կը հրաւիրեմ զՁեզ որ Ձեր կամքն յայտնէք:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Այսպիսի հրատարական մը պէտք չէ որ ընդունուի, որովհետև քանի որ պարտաւորեալ եմ հրատարելու և կրտէ, կը հետեւի թէ հրատարելու համար պատճառներ ունի: Եւ երբ մէկը պատճառներու համար կը հրատարի, պէտք է մերժել նորա հրատարականն, և հրաւիրել զինքն որ դոյ իւր պատճառները բացատրէ:

Ուստի կեղտակայնեմ մերժել Փափազեան Էֆէնտի հրատարականը:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Փափազեան Էֆէնտի հրատարականը պատճառաբանեալ չէ, որովհետև պատճառ մը յայտնած չէ. ուստի իրրև սարզ հրատարական մը պէտք է որ ընդունուի:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կը յիշեմ թէ որչափ մը կայ, որ կը տրամադրէ Գիւաններէ եկած հրատարականները չընդունիլ. ուստի սոյն որոշման վրայ յենլով կառաջարկեմ որ Փափազեան Էֆէնտի հրատարականը մերժուի:

ՏՕԲԹ. ԹԻՐԵԱՔԵԱՆ ԷՖ. — Կըսուի թէ Գիւաններէ եկած հրատարականները չընդունիլը սովորութիւն է, բայց ես պիտի ըսեմ թէ զեղծում մ'է այդ. որովհետև երբ մէկը կրտէ թէ կը հրատարիմ պաշտօնէս, ուլ պէտք չէ պնդել որ շարունակէ, վասն զի բնաւ բունուոր չէ բռնադատել զմարդ որ իւր կամայն հակառակ պաշտօն վարէ:

Իսկ եթէ հրատարելու համար պատճառ մ'ունի Փափազեան Էֆէնտի և անոր համար «հարկադրեալ եմ» կըսէ, պէտք է որ յայտնէ իւր պատճառներն, որպէս զի քննուին. իսկ ատանց ասոր պէտք է ընդունիլ նորա հրատարականը:

ԵՌԻՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Ես առիթ ունեցայ խօսելու Փափաղեան Էֆէնտի հետ, որ իր մասնաւոր պատճառներն ինձ յայտնեց. անկարելի թիւններ ցուցուց, և ըսաւ թէ որոշած է քիչ մ'աւտեն որ և իցէ գործօն պաշտօն չվարել: Զանազն համոզել զինքն որ ետ առնու իր հրաժարականն, սակայն անհնար եղաւ, որովհետեւ կը սնդէր և կըսէր թէ քիչ աւտենէն ճանապարհորդութիւն պիտի ընէ:

Այս մասնաւոր տեսակցութեանս արդիւնքըն իբր տեղեկութիւն կը հաղորդեմ Ձեզ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այսքան վիճարանութիւն կարծեմ թէ բաւական է, որովհետեւ թեր ու դէմ խօսուեցան արդէն: Ոմանք առարկեցին թէ քանի որ Փափաղեան Էֆէնտի կըսէ թէ «հարկադրեալ եմ հրաժարելու» չկրնար պարզ նկատուիլ անոր հրաժարականն. ոմանք ալ պնդեցին թէ՛ քանի որ պատճառ չյայտնէր, պարզ հրաժարական մ'է այն: Ուստի նախ այս կէտը պիտի պարզեմք:

Այս բացատրութեամբ Ատենապետ Էֆէնտի քուէի դրաւ հրաժարականին բնութիւնըն, և ժողովն 8ի դէմ 14 քուէով պարզ հրաժարական նկատեց զայն:

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտի հրաժարականը ժողովոյ քուէին ենթարկեց, որ 2ի դէմ 14 քուէով ԸՆԴՈՒՆԵՑ Փափաղեան Էֆէնտի հրաժարելուն Համարակալութեան Դիւանի անդամակցութենէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը մնայ Հրաժարելոյն տեղ ուրիշ մէկն առաջարկել Մայր Դիւանէս, սակայն այս գործն յաջորդ նստին թողլով, Պայճեան Էֆէնտի հրաժարականը կենթարկեմ ժողովոյ նկատողութեան:

Սոյն հրաժարականն ալ 2 քուէի դէմ 14 քուէով ԿԸՆԴՈՒՆԵՑ Ժողովն:

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտի կը յայտարարէ թէ Գ. Ատենադպիր Հինքեարպէյէնտեան Տիգրան Էֆէնտի կը ժառանգէ՝ ըստ օրինի՝ Բ. Ատենադպրի պաշտօնն:

Յետոյ ժողովոյ կարծիքը կը խնդրէ Ատենապետ Էֆէնտին Ունճեան Արիկ Էֆէնտի յԵրեսփոխանութենէ հրաժարման վրայ:

ԵՌԻՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅ. — Փափաղեան և Պայճեան Էֆէնտիներու հրաժարականներն ընդունեցինք յաւճ մ'աւաջ, բայց նոքա երկրորդական պաշտօններէ կը հրաժարէին. իսկ Ունճեան Էֆէնտի Երեսփոխանութենէ կուզէ հրաժարիլ, զոր պէտք չէ ընդունիմք:

Գիտեմք որ Ունճեան Էֆէնտի ծանր զրազմունքներ ունի, կը ճանչնամք սակայն իւր ազգասիրական ջերմ զգացումներն և կրնամք վստահիլ որ երբ իւր ազգասիրութեանն հրաւեր կարդացուի, կը բարեհաճի չմերժել իւր ծառայութիւններն առ Ազգն, ինչպէս որ մերժած չէ այլ և այլ պարագաներու մէջ և միշտ օգտակար հանդիսացած է:

Ուստի կառաջարկեմ Ունճեան Էֆէնտի հրաժարականը մերժել:

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, կը ձայնակցիմք Եռուֆեան Էֆէնտի առաջարկութեան:

Ատենապետ Էֆէնտի քուէի կը դնէ Ունճեան Էֆէնտի հրաժարականն յԵրեսփոխանութենէ, զոր ԿԸ ՄԵՐԺԷ ժողովն երկու ձայնի դէմ:

Կ.

Առաջարկուրիւն Իփեքճեան Էֆէնտիէն, Երբից կանոնագրի վերաբերեալ բարեփոխմանց.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Երեսփոխան Իփեքճեան Էֆէնտի կողմանէ գրաւոր առաջարկութիւն մը կայ, Ներքին Կանոնագրութեան ինչ ինչ տրամադրութիւնները բարեփոխելու համար:

Աւասիկ այդ առաջարկութիւնը

Մեծապատիւ Ատենապետ Էֆէնտի Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Ազգ. Ժողովոյ նիստերու և աշխատութեանց արդիւնաւորութիւնը գլխաւորապէս երկու պայմանէ կախում ունի. — Երեսփոխանաց ձեռնհասութենէն ու պարտուց ճանաչումէն և իր ներքին բարեկարգութենէն:

Ժողովոյ ներքին բարեկարգութիւնը մասամբ Երեսփոխանաց անձնական հանգամանքներէն և արժանիքէն կախում ունի. — որ գլխաւորապէս Ազգին ընդհանուր վիճակին և ընտրողաց զիտակցութեան և լուսաւորութեան համեմատ կըլլայ, — մասամբ ալ իր ներքին կանոնագրութեան տրամադրութիւններէն:

Յիրաւի, ձեռնհաս և պարտաճանաչ Երեսփոխանք թերի կանոնագրութեամբ ալ կրնան ժողովոյ նիստերը բաւական արդիւնաւոր ընել: Բայց այսու ամենայնիւ թէ մեր և թէ այլոց փորձերը կը հաստատեն թէ լաւ կանոնագրու-

թիւնը կրնայ նոցա ձեռնհասութեան զօրավիգ և պարտուց ճանաչման ու կատարման խթան ըլլալ:

Արդ, Ատենապետ Տէր, Ազգային Ժողովոյ ընթացքին աւելի կանոնաւորութիւն, արագութիւն և արդիւնաւորութիւն տալու փափաքով՝ պատիւ ունիմ առաջարկել Պատկառելի Ժողովիգ հետեւեալ կանոնական բարեփոխութիւնները և խնդրել որ հաճի ստիպողութիւն տալ առաջարկութեանս:

Յօդ. 1. Վերջին պարբ. Ա. մաս — «Դիւանին կազմութեան հետ» բառերը ջնջել:

Յօդ. 3. Ա. պարբերութեան տակ յաւելուլ «Ընտրութեանց տեղեկագրին մէջ պէտք է նշանակուին նաև 1. բոլոր ընտրողաց թիւը, 2. Գուէարկութեան մասնակցողաց թիւը և 3. Ընտրութեան քանի քուէով կատարուած ըլլալը:»

«Առաջին քուէարկութեամբ կատարուած ընտրութիւնը օրինաւոր կը համարուին՝ եթէ ընտրողաց մեծագոյն մասը քուէ տուած է. իսկ յետոյ ընտրողաց մէկ չորրորդին մասնակցութիւնը կը բաւէ:»

Յօդ. 3. Վերջին պարբերութիւնը բարեփոխել այսպէս:

«Ժողովը ութ օրէն վերստին կը գումարի օրակարգ ունենալով, 1. կազմութիւն Մայր Դիւանի և 2. կազմութիւն նախաքննիչ դիւանաց:»

Յօդ. 6. Բարեփոխել այսպէս .

« Ատենադրութիւններէն զատ Դիւանն ունի հինգ գլխաւոր տուժար — 1. Ներկայութեան . 2. Խնդրոց կարգի . 3. Խօսից կարգի . 4. Օրինական բարեփոխութեանց կամ յաւելուածոց և 5. Պատժոց և բացակայութեանց : Բոլոր տուժարներն պէտք է միշտ Դիւանին վրայ գտնուին ի տես Երեսփոխանաց , »

Յօդ. 7. Բարեփոխել այսպէս .

« Ժողովը չորս նախաքննիչ Դիւան կընարէ իր մէջէն , որոց կը յանձնէ վիճարանելի խնդրոց նախադատարաստական քննութիւնը :

Ա. Դատարարական զիւան , որուն պաշտօնն է ազգ. կըթուլութեան վերաբերեալ խնդրոց նախաքննութիւնն ու օրինական ծրագրաց խմբագրական քննութիւնը :

Բ. Տնտեսական զիւան , որոյ պաշտօնն է ազգ. սեփականութեանց և այլ ամեն դրամական խնդրոց նախաքննութիւնը :

Գ. Իրաւասութեան կամ Յարաբերութեանց զիւան , որոյ պաշտօնն է բոլոր այն խնդրոց նախաքննութիւնը , որք Վարչութեան իրաւասութեանէն վեր կամ անոր դէմ բողոք են :

Դ. Չեռնհասութեան զիւան , որոյ պաշտօնն է օրինական և կրօնական կամ խառն խնդրոց նախաքննութիւնը :

Նախաքննիչ զիւանաց պաշտօնն է նաև օրինաց ծրագրներու պատրաստութիւնը : »

Իբրև զատ յօդուած յաւելուել և հետեւեալը .

« Ժողովոյ Մայր Դիւանն ու նախաքննիչ Դիւանները իրենց տրամադրութեան ներքև կուենան երեք քարտուղար , յորոց մին պէտք է օրէնսգետ , երկրորդը՝ ոգի . և շրջակա գործոց հետո և երրորդը՝ արհեստագետ և հաշուագետ ըլլայ :

« Բարտուղարաց պաշտօնն ու պարտականութիւնները մասնաւոր կանոնադրով մը կը գծուին , և ժողովը կանուանէ զանոնք Երեսփոխանաց մէջէն կամ դրսէն և կը սահմանէ նոցա ռոճիկը :

Բաց ի քարտուղարներէն ժողովը կուենայ բաւական թուով գրագիրներ՝ զորս Մայր Դիւանը կանուանէ և որոց ռոճիկը ժողովը կը սահմանէ :

Յօդ. 9. ջնջել , վասն զի յաւելուածոյ 3<sup>րդ</sup> յօդուածը անոր տեղը կը բռնէ :

Յօդ. 14. Ա. պարբ. « անդամ մը » բառէն ետքը եկած մասը ջնջել :

Բ. պարբ. ջնջել , վասն զի յաւելուածոյ 7<sup>րդ</sup> յօդուածը անոր տեղը կը բռնէ :

Յօդ. 19. « Թղթերը » բառէն ետք յաւելուել « իրենց մատուցման կարգովը » :

Յօդ. 47. 2. պարբ. ջնջել իբր աւելորդ :

Յօդ. 54. Բ. պարբ. « Մայր Դիւանի կազմութիւնը » բառերը ջնջել և Գ. պարբերութեան մէջ յաւելուել նոյնը :

Գ. պարբ. « ու Վարչութեան տարեկան համարատուութիւնքը » ջնջել :

Դ. պարբ. ջնջել :

Ե. պարբ. բարեփոխել այսպէս՝ « Եւ տոյ կուգայ Վարչութեան համարատուութիւնը և նախագահական ճառով ելն : »

Յօդ. 61. Ա. պարբ. առաջին մասը բարեփոխել այսպէս .

« Երեսփոխանաց ըրած թէ պարզ և թէ օրինական առաջարկութիւնք գրաւոր պէտք է ըլլան , և վերջիններու պարունակած իւրաքանչիւր տրամադրութիւնը պէտք է յօդուած յօդուած խմբագրուած ըլլայ օրինական ծրագրի ձեւով :

Յօդ. 62. Բարեփոխել այսպէս .

« Չեռնհաս դիւանին եզրակացութիւնը ժողովոյ որոշման կենթարկուի , և եթէ նկատուում տեղի ունենայ կանցունէ զայն և ին . »

Յօդ. 64. Բարեփոխել . « Օրաձեռեալ առաջարկութիւնք երեք նիստէ և մերժեալ առաջարկութիւնք վեց նիստէ ետք կրնան վերստին ժողովին ներկայացուիլ : »

Յօդ. 67. Ա. պարբ. մէջ յաւելուել . « և տպագրուելով Երեսփոխանաց կը հաղորդուին կոչնագրոց հետ վիճարանութեան բացումէն առաջ : »

Յօդ. 70. Սա երկու պարբերութիւններ յաւելուել . « Նմանապէս Պատրիարքն ու Վարչութիւնը իրաւունք ունի 66<sup>րդ</sup> յօդուածի Գ. պարբերութեան տրամագրած վերջնական քուէէն առաջ պատճառաբանեալ դիտողութիւն ներկայել հաստատուելիք օրինաց գործադրութեան դէմ : Այս կրկին պարագայից մէջ ժողովը իր որոշումը կընէ Երեսփոխանաց օրինական մեծամասնութեան 2/3 ին քուէովը : »

Յօդ. 71. Ջնջել , վասն զի թէ աւելորդ է և թէ հակառակ 64<sup>րդ</sup> ին :

Յօդ. 72. Սա պարբերութիւնը յաւելուել . « Հաստատեալ օրէնքները ատենագրութեանց մէջ չեն անցնիր , այլ իբրև յաւելուած առանձին կը տպուին պահանջուած քանակութեամբ : »

Յօդ. 73. Գ. Բարեփոխել այսպէս . « Սոյն վճռագիրը կը պահուի Ազգ. Ժողովոյ թանգարանին մէջ : »

Ե. բարեփոխել այսպէս . « Առ առաւելն 8 օր ետք Պատրիարքը կը յղէ հաստատեալ օրէնքը բոլոր Առաջնորդաց և Գաւառական և Թաղ. Ժողովոց և Վարչութեանց ի գործադրութիւն : »

2. պարբերութիւն յաւելուել . « Հաստատեալ օրինաց մէջ տեղի ունեցած բարեփոխումներու գործադրութիւնն ալ սոյն յօդուածոց նախընթաց պարբերութեանց համաձայն կը տնօրինուի : »

Յօդ. 75. Բարեփոխել այսպէս . « Հաստատեալ օրէնք մը կրնայ բարեփոխութեան ենթարկուիլ նոյն ատենական շրջանին մէջ եթէ Վարչութիւնը առաջարկէ և ժողովը անոր ստիպողութիւնը ընդունի , իր օրինական մեծամասնութեան 2/3 ին քուէովը : »

Յօդ. 77. Գ. պարբ. « Օրէնքն » բառը ջնջել :

Դ. պարբ. ջնջել իբր աւելորդ :

2. պարբ. « Հանդերձ Ազգ. երևմըտից տարեկան պիւճէով » բառերը ջնջել :

Յօդ. 78. Ա. « երկրորդ » բառը « երրորդ » ընել :

Յօդ. 79. Այս յօդուածին տակ յաւելուել :

« Յաջորդ տարուան պիւճէն վարչութիւնը պիտի ներկայէ ժողովին ատենական շրջանի փակումէն դէժ երկու ամիս առաջ, որպէս զի փակումէն առաջ վաւերանայ, իսկ եթէ վաւերացումը տեղի չունենայ՝ նախորդ տարուան պիւճէն կը գործադրուի »

Յօդ. 80. Ձեռքի իրր աւելորդ (Տես Օր. վարչ. յօդ. 9) :

Յօդ. 82. Ա. բարեփոխել. « Երեսփոխանք միշտ իրաւունք ունին հարցում կամ հարցապնդում ուղղել վարչութեան անդամոց, և եթէ ժամանակին պատասխան չընդունին՝ Պատրիարքին » :

Սոյն յօդուածին տակ դնել յաւելուել 5<sup>րդ</sup> յօդուածը, որուն մէջ « Յատենի ժողովոյ և այլն. » բառերէն ետք « եթէ երկու կրկնող գտնուի » բառերը յաւելուել :

Յօդ. 85 և 86. Ձեռքի իրր աւելորդ (Տես Օր. վարչ. 9) :

Յօդ. 89. Գ. բարեփոխել. « Հանրագիր թէ աղերսագիր պէտք է Պատրիարքին կամ Ատենապետին մատուցուի »

Յօդ. 90. Ա. Բ. Գ. միացնելով բարեփոխել. « Դիւանը կը հաղորդէ ժողովին հանրագրին կամ աղերսագրին համառօտ բովանդակութիւնը, ստորագրողաց թիւը, երկիրը, բնակութիւնն ու արհեստը և յղումը կարտասանէ » :

Ժողովը ձեռամբարձով առանց վէճի կորոչէ՝ եթէ ուղէ մատուցեալ թուղթը ամբողջութեամբ լսել : »

Յօդ. 91. Նախաքննիչ դիւանին տեղեկագիրը լսելէ ետք՝ ժողովը իւր ու

րոշումը կուտայ, որ կը հրատարակուի ի գիտութիւն ստորագրողաց :

Յօդ. 92. Ձեռքի (տես յաւելուել 6<sup>րդ</sup> յօդ. ) :

Յօդ. 94. Բարեփոխել այսպէս. « Ժողովոյ նիստերուն ունկնդիր ըլլալու համար սոմսակ ունենալու է :

Տոմսակները ժողովատեղւոյն ընդարձակութեանը համեմատ թուով կը պատրաստուին և ժողովարանի դրան առջև կը բաժնուին : Տոմսակները սպաւելէ ետք ունկնդիր չընդունուիր. արտաքոյ կարգի բացառութիւնք կըլլան Ատենապետին հրամանաւ :

Տոմսակաց վրայ նշանակուած կըլլան նիստի թուահամարն ու օրը և ժողովոյ կնիքը կը կրեն : Իւրաքանչիւր Երեսփոխան իրաւունք ունի 2 սոմսակ ստանալու » :

Յօդ. 103. Գ. պարբ. յաւելուել « Նախագահ » բառն ալ :

Յօդ. 104. Ձեռքի, վասն զի 103 Բ. պարբ. վերջին մասին հակառակ է :

Յօդ. 110. 1. « Երկու » բառը « Երեք » և « Երրորդ » բառը « չորրորդ » ընել և « տի իր յանձնառած և այլն » բառերը ջնջել :

2. « Ասի Ազգ. գործը և այլն » բառերը ջնջել :

Գ. պարբ. ջնջել իրր աւելորդ : Այս յօդուածէն ետք յաւելուել.

« Առանց օրինաւոր պատճառի բացակայ գտնուող կամ անուանական կոչման չպատասխանող Երեսփոխանը ամեն անգամ մէկ մէճիտ տուգանք կը վճարէ

Ժողովոյ արկղին : Նմանապէս եթէ Երեսփոխան մը առանց օրինաւոր պատճառի կէս ժամէն աւելի ուշ գայ՝ կէս մէճիտ տուգանք կը վճարէ, և յաջորդաբար երեք ապօրինի յապաղումը մէկ ապօրինի բացակայութիւն կը համարուի :

Ով որ որոշեալ տուգանքը վճարել չուզէ՝ Դիւանէն ազգարարութիւն կընդունի յատենի ժողովոյ : »

Յօդ. 111. Բ. պարբ. վերջը « Նախագահին կամ Դիւանին առաջարկութեան վրայ » բառերը ջնջել :

Վերջին յօդ. Ա. և Բ. պարբ. բաւերփոխել. « Եթէ ատենական շրջանի մը մէջ երկու անգամ յաջորդաբար նիստ տեղի չունենայ ներկայ Երեսփոխանաց անբաւականութեան պատճառաւ և երրորդին Երեսփոխանք Նախագահի յատուկ կոչնագրին (յօդ. 52) դարձեալ չպատասխանեն՝ Նախագահը անհրաժեշտ հարկին մէջ կը գտնուի և այլն. » :

Կանոնագրութեան յաւելում ընդ յօդուածը ջնջել, վասն զի զեղծմանց տեղի կուտայ և կանոնագրի 19<sup>րդ</sup> յօդուածը աւելի օրինաւոր է :

Յաւելում ընդ յօդուածը բարեփոխել այսպէս.

« Ազգ. ժողովը ելեւմտից յանձնախումբ մը կընտրէ իր մէջէն երեք անդամէ, որոց մէկը գտնաւապետի, միւսը համարակալի և երրորդը ծախատարի կամ մատակարարի պաշտօն կը վարեն և որք թէ՛ անհատապէս և թէ՛ հաւաքապէս պատասխանատու են ժողովին և վեց ամիսն անգամ մը տեղեկագիր և հաշիւ կը ներկայացնեն անոր » :

Յաւելուել և սա յօդուածը :

« Ազգ. ժողովը իրեն յատուկ արկղ կունենայ, որուն հասոյթի ազրիւրներն են. »

1. Իր հրատարակութեանց վաճառումէն դոյացած հասոյթը :
2. Մասնաւոր նպաստք և նուէրք :
3. Յանուն ժողովոյ եղած կտակք :
4. Երեսփոխանաց վճարած տուգանքները :
5. Ազգ. Մատուկէն ժողովոյ ծախույ յատկացեալ գումարը :

ԹԱՆԳԱՐԱՆ

Ազգ. ժողովը Թանգարան մը կունենայ, ուր կը պահուին իր Ատենագրութիւնները, հաստատեալ օրէնքները և այլ գրեանք. թանգարանը մասնաւոր կանոնագրութեամբ մը կը անօրինուի և ժողովէն ընտրեալ անօրէն մը կունենայ :

Ազգ. Երեսփոխան  
Հ. Խիքրճեան

10 Օկտ. 1881 Ղալաթիոս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այս առաջարկութիւնը պէտք է ձեռնհաս Դիւանին յղել՝ ըստ օրինի ի նախադրեալութիւն : Եւ որովհետեւ օրինական խնդիր մ'է, հարկ կըլլայ Նախաձեռնութեան Դիւանին յղել զայն, յղենք, եթէ ժողովը հաւանի :

ՋԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛ :

Ատենապետ Էֆէնտի քուլի կը դնէ և ժողովը ԿՈՒՈՇԷ Նախաձեռնութեան Դիւանին յղել, ի նախադրեալութիւն, Խիէքճեան Էֆէնտի առաջարկութիւնն :

Յ.

Հարցազիր Նիկողոս Էֆենտի Թիւրքեմանեանի կողմանէ ի մասին Սոյ կաթողիկոսական խնդրոյն .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյ կաթողիկոսական խնդրոյն նկատմամբ Երեսփոխաններէն Նիկողոս Էֆենտի Թիւրքեմանեանի կողմանէ հարցազիր մ'եղած է, զոր կը ներկայեմ ժողովոյ .

Մեծապատիւ Ատենապետ Էֆենտի Ազգ. Երեսփոխանական ժողովոյ

Ազգային ժողովոյ անցեալ տարւորը ջանի վերջին նստին մէջ, որ յ2 Ապրիլի 1881, Իզմիրեան Գեր. Մատթէոս Եպիսկոպոսի կողմանէ առ կրօնական Խորհրդականն ուղղեալ հարցում մը կրկնուած էր, Սոյ կաթողիկոսին յարուցած խնդրոյն ստանալիք վերջնական կարգադրութեանը կրօնական մասին վրայօք որոշ բացատրութիւն մը խընդրելով :

Այդ հարցման պատասխանը ցարդ յապաղելով, միանգամայն և անկէ ի վեր Սոյ կաթողիկոսին հետեւած ազգամիտ ընթացքն և Ազգին դարաւոր իրաւանց մէկ քանին ջնջելու և ազգային միութիւնը պառակտելու նկրտող գործած վերջին արարքներն՝ այդ խնդրոյն վերջնական կարգադրութեանը քաղաքային մասին վրայօք ալ որոշ բացատրութեանց հարկ մը յերեւան ածելով, պարտականութիւն կը համարիմ իրիւ Ազգ. Երեսփոխանաւր ընդարձակութիւն մը տալով այդ հարցման ձեռն, խնդրել Ազգ. կեդր. վարչութեանէն որ բարեհաճի իրազեկ առնել զԱզգ. ժողովութիւն :

Սոսյգ է որ Սոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսը, Ազգ. ժողովոյ 1876 Փետր. 20ի նստին մէջ որոշած և այս անգամ առ Տ. Մկրտիչ Սրբազան առաջարկեալ կաթողիկոսական պայմանագիրն, անկախաբար ու և է միջանկեալ առաջարկութեանց, ընդունելու դժկամակութեանը վրայ կը շարունակէ պնդել մինչև ցարդ հակառակ իւր գրաւոր խոստմանն :

Եւ թէ սոսյգ է այս պարագայն, որ յայտնի և ակներև խոստմանազանցութիւն մը կը նշանակէ, Մայր Դիւանիդ միջոցաւ Ազգ. Պատկառելի Երեսփոխանական ժողովոյ լուրջ ուշադրութեանը կուզեմ ներկայացնել սա ծանրակշիռ կէտը թէ՛ այսպիսի յայտնի խոստմանազանցութեան և դժկամակութեան մը պարագային առաջը՝ անհրաժեշտ հարկ մը չը՝ ծագիր քննելու թէ՛, իրաց այս վիկին մէջ Սոյ կաթողիկոս Տ. Մկրտիչ Սրբազան իւր այդ խոստմանազանցութեամբ Սոյ կաթողիկոսութեան պաշտօնն ու կոչումն յինքն կրելու իրաւունքն այլ ևս կորուսած չը լինիր, և թէ իւր վերջին հեռեւած ազգամիտ ընթացքն և Ազգին դարաւոր իրաւանց մի քանին ջնջելու և Ազգ. Եկեղեցւոյ միութիւնը պառակտելու և խզելու նկրտող իր գործած արարքներն բաւական զօրաւոր չեն միթէ իրմէն հեռացնելու Ազգին այն ընդհանուր վստահութիւնն ու համակրութիւնը՝ սրովք կաթողիկոսութեան արժանի հանդիսացաւ. և որոյ վայելմամբը միտն հնար և կարելի է իրեն կաթողիկոսական պաշտօնն շարունակել :

Կը յուսամ թէ Ազգին և Ազգ. Եկեղեցւոյ միութեան և իրաւանց շահուցը նախանձանդիր միւս Պատ. Երեսփո-

խանք ալ պիտի ձայնակցին ինձ, վերոյիշատակեալ հարցմանցս պատասխանն խնդրելու Ազգ. վարչութեանէն, որպէսզի անմիջական լուրջ նկատողութեան առնու՝ Ազգ. ժողովոյ բացորոշ որոշմանն և կամացն առաջը՝ Սոյ վեհ. կաթողիկոսին այժմու գտնուած կացութիւնը քննելու և ըստ այնմ իւր վերջնական վճիռն արտասանելու հարկը, անել և գայթակղական խնդրոյ մը միանգամ ընդ վերջ վախճան մը տուած ըլլալու համար :

Ազգային Երեսփոխան Նիկ. Թիւրքեմանեան 26 Օգոստ. 1881

Կ. Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լսեցիր որ Թիւրքեմանեան Էֆ. Սոյ կաթողիկոսական խնդրոյն ներկատմամբ ասկէ ստաջ եղած հարցումը կրնդ լայնէ, խնդրոյն վիճակին և հանգամանացը վերայ Ազգ. վարչութեան ստիպողարար բացատրութիւն կը խնդրէ, և կուզէ գիտնալ թէ վարչութիւնն այն մասին ինչ անօրինութիւն ըրած է :

Արդեօք վարչութիւնը կուզէ՞ անմիջապէս պատասխանել :

ԹՈՒՍՈՒՑԵԱՆ Յ. ԷՖ. — Այսպիսի հարցում մը կրնայ պարտիւ իր կորուստութիւնն ունենալ և իրօք ունի, սակայն չեմ ուզեր ծանրանալ այն հեռեւութեան վրայ, զոր կը հանէ հարցման պատուարժան հեղինակը, մինչև որ վարչութիւնն իւր պատասխանը տայ, որ եթէ ուզէ անմիջապէս պատասխանել պատրաստ եմ լսելու :

ԵՌՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. (Ատենապետ վարչ. Խորհրդոյ) — Թէ և կը մտախփինք այս խընդիրն իր հասուն վիճակին մէջ բերել հոս,

բայց երբ ստիպողութիւն տրուի, վարչութիւնը պատրաստ է խնդրոյն վիճակին վրայ պէտք եղած տեղեկութիւնն առժամայն տալու :

ՁԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, կուզեմք լսել :

ԵՌՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Բեմն ելնելով) Տե՛տրք Երեսփոխանք, ինչպէս որ կը տեսնէք, վարչութեանն ուզուածն համարատուութիւն մ'է այն խնդրոյն նկատմամբ, որով կրնազի Ազգը :

Սակայն ներուի ինձ դիտել տալ թէ յուզուելու և վրդովումներ հանելու հարկ չիայ, զի Ազգ. վարչութիւնը լուրջ ուշադրութեան տուած է այս խնդրին, որ նոր չէ, հին է, և թէպէտ դժբաղդարար իր պարզ վիճակէն սրահ մ'եղած է, բայց վարչութիւնը կը յուսայ թէ պիտի կրնայ խնդրոյն օրինաւոր լուծում մը տալ, որուն համար լրջօրէն կաշխատի և պէտք եղած միջոցներն արդէն ձեռք առած է, ինչպէս որ պատիւ պիտի ունենամ բացատրելու :

Եւ որպէս զի խնդրոյն հիմունքը լուրջ ըրնուին, պէտք է որ սկիզբէն վարչութեան և կիլիկիոյ Ս. կաթողիկոսին մէջ եղած բանակցութեանց մասին տեղեկութիւն մը տամ կարելի եղածին չափ ընդարձակ :

վարչութիւնը բաւարարին անտեղեակ Ս. կաթողիկոսին ընելու ուղեւորութեան, իւր երբորք նիստն ըրած էր, երբ յանկարծ Պետրոս Եպիսկոպոսի Ատանայէն քաշած մէկ հեռագիրն ստացաւ որով կը ծանուցանէր թէ կիլիկիոյ Տ. Մկրտիչ Ս. կաթողիկոսն այն օրուան շոգենաւով կը մեկնի Կ. Պօլիս գալու համար : Այս լուրին վրայ՝ վարչութիւնը զիմեց անմիջապէս Ս. Նախագահին, Ն. Արքայութիւնը յայտնեց թէ՛ ինք ևս անտեղեակ էր կիլիկիոյ կաթողիկոսին զալուստէն. հետեւապէս կը մտար ստանալ հասկնալու համար թէ ինչ էր գտլուն պատճառն, և երբ հասաւ ի Պօլիս, հետեւեալ օրը գայի զիմքը անտեղեակ և ըսի



Թէ Վարչութիւնն անտեղեակ էր և հասկնալ կուզէր իր գաղաւն շարժառիթը . սրտաստանեց թէ իւր ուղեորութիւնը երեք պատճառներ ունէր , բողոքական , ազգային և նիւթական խնդիրներ . և գանգատեցաւ որ Պատրիարքարանը սէտք եղածը չընելուն համար թեմական ժողովը պարտաւորեր է զինքը գալ և անձամբ կարգադրել այդ խնդիրները :

Կը գանգատէր թէ Վարչութիւնը երեսէ ձգեր է զԿիլիկիա և անոր բարգաւաճումը չուզեր , թէ հաշտ աչօր չնայիր Կիլիկիոյ վրայ , և ինչ :

Կրնար երևակայել թէ ինչ աստիճան մտալ է իւր այս կարծիքը . ես փութացի սէտք եղած բացատրութիւնները տալ և հասկցուցի թէ Վարչութիւնն անբաժան կը ճանչնայ զԿիլիկիա ազգային միութենէ , թէ պատրաստ է միշտ իւր կեդրոնական իշխանութիւն իւր պաշտպանութիւնը մատուցանելու , թէ ամեն եկող Վարչութիւն այս մտօր վարուած ըլլալով , տեղի չկար իւր գանգատանայ , և թէ թիւրիմացութենէ զատ ուրիշ բան չէի տեսներ ինդրոյն մէջ , և թէ այդ թիւրիմացութիւնն ալ կը բարձուէր անշուշտ զիրար հասկնալով : Այս բացատրութեանցս վրայ համոզուեցաւ և ըսաւ թէ փորձը պիտի ցուցնէ :

Ըսի իրեն թէ Ձեր խնդիրները գրաւորապէս յղեցէք Վարչութեան , բոլոր անոնք որ Վարչութեան կը վերաբերին , զիւրին է ըսածել . իսկ այն խնդիրներն որ Վարչութեան ձեռնհասութենէն վեր են և Ազգ. Ժողովոյ կը վերաբերին , անոնք ալ կը ներկայեւք ժողովին և խնդիրն այսպէս իր օրինաւոր ըսածամիտանալով փութով ձեր Աթոքը կը վերադառնար :

Ահա այսչափ եղաւ մեր տեսութիւնը . բաժնուեցանք իրմէ , որովհետև Ս. Պատրիարքին հետ պիտի տեսնուէր , և խոստացաւ որ իր առաջարկութիւնները գրով մատուցանէ . . .

ՁԱՅՆԵՐ . — Ըսել է Ձեր տեսութիւնը սրաշտոնական չէր :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Թուականն ըսէր :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Շարունակելով) Թուականը չեմ յիշեր . կը խնդրեմ որ չընդմիջէր , թողէ՛ք որ խօսքս շարունակեմ . Ձեր Ըսելիքները նշանակեցէ՛ք և վերջացնելէս յետոյ հարցուցէ՛ք :

Յաջորդ կիրակէն Վարչական Խորհուրդը գումարեցաւ ի Ղալաթիա , Ս. Կաթողիկոսը նոյն օրն ալ մի և նոյն գանգատները կրկնեց : Պէտք չկայ ըսելու թէ Վարչութիւնը հարկ եղած բացատրութիւնը տուաւ , խնդրեց որ իւր խնդիրները գրաւոր կերպիւ ներկայացնէ և խոստացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց և Ազգ. Ժողովոյ գրած կանոնացն համաձայն կարգադրել զանոնք :

Ն. Սրբազնութիւնը յանձն տուաւ գրաւոր ներկայացնել իւր խնդիրներն և ներկայացուց : Իւր գիրը 4—5 կէտերէ բաղկացեալ առաջարկութեանց տեղեկագիր մ'էր , զոր թեմական ժողովը պատրաստեր էր , և որոյ օրինակը յետոյ կը տեսնէք և կը հասկնար թէ ինչ տեսակ խնդիրներ են :

Կրօնային Ատեանը պարտք համարեց նախ Ն. Սրբազնութեան ներկայել այն պայմանագիրն , որ Ազգ. Ժողովոյ կողմէ պատրաստեալ էր 1876 Փետր. 27ին , և զոր աստրագրած էր Ազգ. Ժողովոյ Տ Խաչատուր Կաթողիկոսը :

Կերեայ թէ Տ. Մկրտիչ Կաթողիկոսն ատկէ վշտանալով Կեդր. Վարչութեան հետ պահէր դադրեցուց իւր յարաբերութիւնները : Ձեմ ուղեր յիշել այն պարագան , որ նպատաւորութեան անհարստ զխոստութեանց տեղի տուաւ ազգային լրագրաց մէջ :

Ն. Սրբազնութիւնը կը շարունակէր գանգատիլ թէ Վարչութիւնն իր գործը չտեսներ և կուզէ Սոյ Կաթողիկոսութիւնը բանդել :

Վարչութիւնը զանազան անձանց միջոցաւ ծանայ իրեն թէ ամեն կերպով պատրաստ է իր խնդիրները քննելու , եթէ ինքն համաձայնի նախ Կրօնային Ատեանին հետ : Այս

բանակցութեանց համար բաւական ժամանակ անցաւ , վասն զի . . .

Տ. ԵՂԻՇԷ՛Վ. ԱՅՎԱԶԵԱՆ . — (Բնդմիջելով) Ի՞նչ ըսաւ :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — (Շարունակելով) Ինչ որ ալ ըլլայ խնդիրը կաթողիկոսական տէսակէտով , յայտնի է որ Վարչութիւնը կէտ նպատակի ունեցած է Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց և Ազգ. Սահմանադրութեան համեմատ կարգադրել . սակայն ցաւօք սրտի կը տեսնուէր որ Ս. Կաթողիկոսն այնպիսի ձեռնարկութիւններ կընէր , որ փոխանակ խնդիրն օրինաւորապէս լուծելու՝ դառն հետեւանայ կը յանգէր :

Եթէ Կրօնային Ատեանի առաջարկութեանց ծրագրին մէջ Կիլիկիոյ իրաւանց դէմ բան մը կը տեսնէր , կրնար օրինաւորապէս իր դիտողութիւններն յայտնել , որ ձեռնհաս ժողովոյ մէջ ուշադրութեան կրտնուէր ի հարկէ : Կրօնային Ատեանն իրաւունք ունէր կրօնական ինդրոյն նախապատուութիւն տալու , որովհետև կուզէր որ միութեան կողմը չկողտի և Էջմիածնայ Մայր Աթոսոյ հետ օրինաւոր յարաբերութիւն հաստատուի :

Ս. Կաթողիկոսը չուզեց զիջում ընել այս մտաին , և ահա Վարչութիւնն ալ իրաւունք ունեցաւ զխոստութեանը վրայ տարակուսելու մինչև այն կէտն՝ յորում Ն. Սրբազնութիւնն զգար այդ հարկը :

Եւ երբ Վարչութիւնը տեսաւ որ իւր ընթացքն և Կրօնային Ատեանի առաջարկութիւնները վիրաւորած են Ն. Սրբազնութեան անձնատիրութիւնը , սոյն միջադէպն ուղղելու համար՝ ասրեղիւսոյ ասթիւ Պատրիարքական Փոխանորդը զրկեց ի շնորհաւորութիւն , որ փութաց մեկնել նոցա շարժառիթն և զիտել տըւու թէ Վարչութեան և Կրօնային Ատեանի ընթացքն անկեղծ էին , թէ եղած առաջարկութիւնները ոչեք չէին իրեն վիրաւորում պատ-

ճառել , որովհետև Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իրաւունքները չնջելու բնութիւն չունին երբէք :

Պատրիարքական Փոխանորդն այս բացատրութիւններէն ետև՝ հրաւիրեց զՆ. Սրբազնութիւնն որ Յնդեան երկրորդ օրը ներկայ գըտնուի ի Պատրիարքարան , և Ս. Պատրիարք Հօր հետ միատեղ ընդունի Երեսփոխանայ և Վարչական մարմնոց պաշտօնական սցեկըթիւնը , որ յարաբերութեանց հաստատուելուն սրտճառ մը կը ըլլար , և զիրար հասկնալով թիւրիմացութիւնք կը բարձուէին :

Տ. Մկրտիչ Կաթողիկոսը չեկաւ ներկայ չդանուեցաւ , չեմք զիտեր ինչ նպատակաւ . սակայն բանակցութիւնք շարունակուելով երբ ինքն հասկցաւ թէ՛ մինչև որ Կրօնային Ատեանի հետ իրաւաստութիւն և համաձայնութիւն չգոյացնէ , իր առաջարկութիւնները չպիտի կրնային նկատողութեան առնուիլ , վստահացուց զմեզ որ ինք ալ համաձայնութեան կը փոխարի և կուզէ որ իրաւաստութիւն դոյանայ . բայց խախտ կը բողոքէր Էջմիածնայ դէմ Սոյ Կաթողիկոսութիւնն հետեալ և անվաւեր կոչելուն և Էջմիածնայ թեմերուն մէջ Սոյ միտքան եկեղեցականայ սրաշտոն վարելու մասին որդէրը զնելուն համար , և դառն գանգատներ կը յայտնէր :

Դիտել տրուեցաւ իրեն թէ՛ ո՛չ Երեսփոխանութիւնն և ո՛չ Վարչութիւնն Էջմիածնի համամիտ է այս մասին , և թէ Կեդր. Վարչութիւնն իր ընտրութիւնը վաւերացնելով՝ գործնականապէս հասկցուց թէ Սոյ Կաթողիկոսութիւնն հետեալ և անվաւեր չճանչէր : Աւելորդ է ըսել , Տեսիր Երեսփոխանք , թէ ո՛չ Երեսփոխանութիւնն և ո՛չ ալ Ազգ. Վարչութիւնն՝ Էջմիածնայ զՍիս հետեալ և անվաւեր կոչելը կընդունին :

Վարչութիւնն արդէն բողոքած է ժամանակին և ասթի մը կապուէր որ Էջմիածնայ հետ ալ բանակցութեան մտնէ այն մասին , որովհետև Էջմիածնի դէմ այս նկատմամբ բողոքելու պարտականութիւնը միայն Տ. Մկրտիչ

Կաթողիկոսինը չէր, այլ մանուածդ Ազգր-  
Վարչութեան :

Ուստի մեզի կիցնար պէտք եղածն ընել,  
երբ Տ. Մկրտիչ Կաթողիկոսն համաձայնէր  
Վարչութեան հետ սոյն խնդրոց համար, որք  
երկրորդական էին արդէն, այսինքն՝ վերաբրի,  
ստորագրութեան են. խնդիրներ, և ստուգիւ  
երբ տեսանք որ վերաբր փոխեց և ստորագ-  
րութեան ձևն ալ շտկեց, բնականապէս ձեռք  
առնուեցան բանակցութիւնք և սկսանք աշ-  
խատելու, ըստ որում Վարչութիւնը կարծե-  
լով թէ Ն. Սրբազնութիւնը վերահասու եղած  
է իրեն եղած տնկեղծ աղբարարութեանց և  
թէ սխալի համաձայնի, սկսաւ իւր ներկա-  
յած ծրագիրն ուղղութեան տանուլ և իրեն  
հետ վերատին բանակցիլ :

Սակայն մեծ եղաւ իւր դարմանքն երբ  
տեսաւ թէ իր խոստանոցն հակառակ խոչըն-  
դոտներ կը յարուցանէր, որոց մէջէն զլիսա-  
ւորները սխալի նշանակեմ :

Ասոյ վիճակաց մէջ ինչ ինչ խնդիրներ կը  
ծագէին, որոց կարգադրութեանն համար ինք  
մէկ կողմէ հաւանութիւն կուտար և միւս կող-  
մէ բողոքոյ ձայն կը բարձրացնէր. մայրաքա-  
ղաքին պանդուխտ Կիլիկեցիներն ի ժողով հրա-  
ւիրելով նոցա ասարեր մեկնութիւններ կու-  
տար, համոզել ճգնելով թէ Վարչութիւնը  
Կիլիկիոց Աթոսոյն ջնջումը կուզէ, մինչդեռ  
Վարչութիւնը նոյն Աթոսոյ պայծաութեանն  
և Կիլիկիոյ բարգաւաճմանը կը ջանայ և կաշ-  
խատի, զոր խիտ լաւ հասկցաւ մայրաքաղա-  
քիս պանդուխտ Կիլիկեցի ժողովուրդն :

Իրոց այս վիճակին մէջ յանկարծ չրջա-  
բերականի մ'օրինակը կը հասնի մեր ձեռքը,  
զոր Կիլիկիոյ գաւառները զրկած էր Տ. Մըկեր-  
տիչ Կաթողիկոս և յորում կը գտնուատէր թէ  
Վարչութիւնն ամենևին իւր երեսը չէ նայած և  
թէ Կիլիկիոյ խնդրոյն կարևորութիւնն չտար  
են. ևն :

Յորտնի է թէ սոյն օրինակ չրջաբերական  
մը ստորագրուիս ժողովուրդը Վարչութեան դէմ

գրգուելու կը ծառայէր : Այսու ամենայնիւ  
Վարչութիւնը հաշտարար տղամ վարուեցաւ  
միշտ. բացատրութիւն խնդրեց իրմէ և միան-  
գամայն հրուիրեց որ Կիլիկիոյ բարեկարգու-  
թեան համար իրեն ներկայացեալ ծրագրին  
փայ իւր դիտողութիւններն յայտնէ ինչպէս որ  
խօսատոցած էր :

Վարչութեան այս հրաւերն անպատասխա-  
նի մնաց. ոչ դիտողութիւն յայտնեց և ոչ  
չրջաբերականի մասին բացատրութիւն տաւա-  
բայց տեղն է հոս որ կարգամ թէ ինչ է այն  
ծրագիրն, որոյ մասին քանիցս իւր դիտողու-  
թիւնն յայտնել խոստացած էր, որուն կապա-  
սէր Վարչութիւնն և սակայն մինչև ցարդ  
ներկայացուցած չէ :

Վարչական Խորհուրդն ինձ յանձնեց այս  
մասին պէտք եղած բանակցութիւնն ընելու.  
յանձն առի սոյն պաշտօնն և սկսոյ Ն. Սըր-  
բազնութեան հետ բանակցիլ, որ կարճ չաե-  
ւեց. և այս միջոցիս ամսոյ մը չափ հիւանդ  
ըլլալով հարկադրեցայ տունէն դուրս չելնել,  
որով որս մը դադրեցաւ բանակցութիւնն, և  
երբ աստղացայ, սկսոյ վերատին շարունակել :

Ըսի Ն. Սրբազնութեան որ եթէ սկզբուն-  
քի վերաբերեալ խնդիր մ'ունի, թո՛ղ յայտնէ  
իւր կարծիքն և ես միջնորդեմ, իսկ եթէ  
մանրամասնութեան կը վերաբերին իւր դիտո-  
ղութիւնը, կրնամք, յարեցի շատով համա-  
ձայնիլ :

Պատասխանեց թէ իւր դիտողութիւնը  
մանրամասնութեանց վրայ է :

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Սակայն ձեր  
տեսակցութիւնն երեք ամիսս ստաջ էր, այ-  
սինքն, Յուլիս 22 ին :

**ԵՌԵՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ.** — Վերջապէս հա-  
մաձայնութիւն մը գոյացաւ Վարչութեան և Կիս-  
նային Առեանին մէջ, ուստի և բանակցութիւնը  
շարունակեցինք, և գործն սկսու ձախայ տանել :

Ահաւասիկ յիշած ծրագիրս :

« Յանուն Կիլիկիոյ Թեմական Ժողովոյ,  
Սրբազան Կաթողիկոսին միջնորդութեամբ,  
Ազգ. Վարչութեան ներկայացեալ տեղեկագրի-  
րնն ուղղութեամբ քննելէ ետև, ի բաց առ-  
եալ ըստ ինքեան անդործադրելի եղած կէ-  
տերն, Ազգ. Վարչութիւնն կարող է յանձն  
առնուլ Կիլիկիոյ վիճակաց համար 1874 ին  
պատրաստուած Սահմանադրական հրահանգը,  
Ժամանակին պահանջած և փորձատութեամբ  
ցոյց տուած բարեփոխութեամբ վերաբննելով,  
յարաբերութեանց կանոնադիր մը ծրագրել :

Այս վերաբննութեան հիմնական սկզբուն-  
քնն պէտք է ըլլան, 1. Հաստատուիս պահ-  
պանել Կեղր. Վարչութեան Կիլիկիոյ վիճակաց  
հետ ունեցած սահմանադրական յարաբերու-  
թիւններն, ինչպէս նաև Սրբազան Կաթողի-  
կոսին իրաւասութիւններն, զորս ունի իրրե  
հոգևոր պետ նոյն վիճակաց վրայ : — 2. Բառ-  
նալ բոլոր այն խոչընդոտներն որք արդէր  
կըլլան Նորին Սրբազնութեան յիշեալ վիճա-  
կաց բարգաւաճմանը համար աշխատիլ, և ա-  
նոնց վրայ իրմէն պահանջուած հսկողութիւնն  
իրականացէս ի գործ դնել :

Արդ, այս տեսակետով, ստանց Ազգին  
միութեան կապը վտանգի ենթարկելու, յու-  
սացեալ օգուտը ձեռք բերելու համար, յա-  
րաբերութեանց կանոնադիրն մէջ պէտք ե-  
ղած գործնական տրամադրութիւնք կրնան  
ներմուծիլ :

1. — Ընտրութեանց տեղեկագրերը Կա-  
թողիկոսին ձեռքն անցնելով Ազգ. Պատրի-  
արքարանի հաղորդութիւն և վտարանան, (մինչ-  
դեռ ստաջ ուղղակի կուգային), և այնուհետև  
Ազգ. Վարչութիւնը ծանուցանէ իւր վաւերա-  
ցումը Գաւառին և Սրբազան Կաթողիկոսին,  
որ իւր օրհնութեան կանգակը շնորհէ :

2. — Ընտրութեանց հաստատութեան վե-  
րաբերեալ հրամանագրերը Բ. Գրնէն ստա-  
ցուելէ ետև, Սրբազան Կաթողիկոսին միջոցաւ  
յուզարկուին իրենց տեղը :

3. — Երբ Կիլիկիոյ վիճակաց վերաբերեալ  
կրօնական կամ բողոքական գործի մը համար  
Բ. Գրան հետ յարաբերութեան գործ մը կա-  
տարուի, խնդրոյն տաւատումէն յետոյ առ-  
նուած պաշտօնական գրութիւններն, Սրբազան  
Կաթողիկոսին միջոցաւ հաղորդէ Պատրիարքա-  
րանն, որու որ անկ է, եթէ ստիպողական  
պարագայ մը չհարկադրէ բացատրութիւն ընե-  
լու :

Ահա այս և այս օրինակ տրամադրու-  
թեամբ օժտեալ յարաբերական ծրագիրը երբ  
երևան ելլէ, թեմական տեղեկագրին Ա. և Բ.  
յօդուածներն ուղղակի իրենց գոհացուցիչ պա-  
տասխանն կատանան, որք արդէն սահմանադ-  
րական հրահանգին վերաբննութիւնը կեն-  
թադրեն :

Տեղեկագրին Գ. յօդուածը կը յայտարար-  
րէ թէ՛ « Թեմական Ժողովին փափաքն է Ա.  
« Աթոսն ի Սիս սրահել, բայց ըստ որում  
« նորոգութիւնն առ նուազն 2000 ոսկուց կա-  
« բօս և Կիլիկիոյ վիճակը միայն անոր բա-  
« սորդը հայթայթելու կարող է, հետևապէս  
« մնացած 4500 լիւրային համար ալ աղբիւր մը  
« կը խնդրէ » :

Կեղրնական Վարչութիւնն գոհութեամբ  
կը ընէ Ս. Աթոսն ի Սիս սրայծառացնելու ա-  
ռաջարկն, որ իւր ալ փափաքն եղած է միշտ,  
ուստի պատրաստ է այս մասին իւր աջակցու-  
թիւնը մատուցանել : Սակայն որովհետև ան-  
հընար է առանց գործադրութեան հանգա-  
մանքներն կատարելուպէս գիտնալու, որ և է  
անօրէնութիւն մը ընել, պէտք է երկու բն-  
նիչ գրիկել, մին Վարչութեան և միւսն Սրբա-  
զան Կաթողիկոսին կողմանէ նշանակեալ, որք  
երթան ստուգեն տեղւոյն վիճակը, ստաջարկ-  
ուած նորոգութեանց համար Կիլիկիոյ վիճա-  
կաց նիւթական միջոցներն, և տեղեկագրեն  
արդիւնքը, որպէս զի Վարչութիւնը հաշիւ  
մ'ունենայ իւր առջև, և ըստ այնմ կեղրու-  
նական նպատակն քանակութիւնն որոշելով,  
Սոյ Աթոսոյն այդ պէտքը հոգալու համար  
զարծանն ի գործ դնէ :

Տեղեկագրին Դ. յօդուածը կը պահանջէ որ « Սոյ Աթոռը 40 հոգիէ բաղկացեալ միաբանութիւն մը, և Ազգ. Սահմանադրութեան պահանջած բոլոր ժողովներն ունենայ » :

Սոյն յօդուածը, ոչ թէ իւր ձեւին կամ դասին՝ այլ ոգւոյն մէջ նկատողութեան առնուելով, հարկ կը դատուի որ Սոյ վանքն իւր պարտուց և իրաւանց վրայ հիմնեալ կանանդիւր մը ունենայ, ինչպէս ունի Երուսաղէմոյ վանքը : Ուստի պէտք է յանձնարուի մը կարգել և պաշտօն տալ անոր, որ Սրբազան Կաթողիկոսին հետ խորհրդակցութեամբ կանոնադիր մը ծրագրէ և անմիջապէս Վարչութեան ներկայացնէ ի վաւերացումն :

Իսկ Ե. յօդուածը, միաբանութեան սպարուստին և զիշերթիկ վարժարանի մը համար 1500 սակոյ եկամուտի պէտքը ցոյց տալով, վիճակին սղբատութեանը պատճառաւ, Տէրութեան ամսական խնդրելու կամ Կիլիկիոյ վիճակներն ընդլայնելու խնդիրն կը կրկնէ :

Յայտնի է թէ այս երկու կէտերուն վրայ, որք արդէն Ազգ. Ժողովն մերժուած են, Վարչութիւնը չկրնար ուղղակի անդրադառնալ : Սակայն նկատելով որ Սոյ վանքը դրամական միջոցներէ զուրկ է այս միջոցիս, պէտք է ասոր դարմանն մտածել : Ուստի պէտք է նաև պաշտօն տալ Սիւ երթալու քննչաց, որ ստուգեն թէ տարեկան ի՞նչ դուժար կրնայ գոյանալ երբ Կիլիկիոյ վիճակաց դաւառական սնտուկներն վճարեն կանոնաւորապէս Աթոռոյն յատկացեալ տուրքերն, թէ ի՞նչ նիւթական միջոցներ ունին Կիլիկիոյ թեմերն Աթոռոյն սլոյժատութեան նպատակաւ համար, և թէ նախնական բարեկարգութեանց վաղ ընդ փոյթ ձեռնարկելու համար անմիջական կերպիւ ո՞րքան գումարի կարոտութիւն կայ : Եթէ կարելի ըլլայ Վարչութեան, առանց քննչաց տեղեկագրին սպասելու, այժմէն վերահասու ըլլալ իրաց վիճակին, կրնայ անմիջապէս իւր աղղկեցութիւնը ի

գործ դնել, յատկացեալ արոց վճարմանը համար, որով տպագրան կապահովի : Իսկ ներկային համար ալ պէտք եղած անմիջական անօրէնութիւններն ձեռք առնելով, վիճակին բարւոյն մասին կարելի եղած նպաստը հայթայթելու կաշխատի :

Տեղեկագրին Զ. յօդուածը քաղաքական առանձնաշնորհում մը կը խնդրէ Սրբազան Կաթողիկոսին համար :

Սոյն առաջարկն ալ, եթէ ժամանակաւ Ազգ. Ժողովոյ ներկայացուած և մերժուած իսկ չըլլար, յայտնի է թէ Վարչութիւնը այսօր չէր կրնար զայն յանձնարարել, ո՛չ Ազգին և ո՛չ Տէրութեան : Վասն զի արդէն Բ. Դուռը Պէրլինի դաշնագրին 61րդ յօդուածին տրամադրութեան համեմատ յանձն առած է Հայաստանի գաւառաց մէջ բարենորոգումներ և բարւոյններ ներմուծել, և Ազգն այդ յօդուածին գործադրութեան կսպասէ : Ուստի երբ ժամն հասնի այդ գործադրութեան, Վարչութիւնը կրնայ խոտանալ այն առեւ՝ տեղահան պիտոյից համաձայն՝ պէտք եղած առանձնաշնորհումներն ստանալու աշխատիլ » :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Պատճառն 1874ի հրահանգն էր, զոր ևս իրեն զրկեցի, և երբ իւր գիտողութիւններն հաղորդեց, այն առեւն Ազգ. Ժողովոյ ներկայեցի, որ մերժեց :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ահա, Տեառք Երեւոթիսանք, նոյն ծրագիրը, զոր Վարչութիւնը Ս. Կաթողիկոսին հաւանութեամբը խորագրած և իրեն ներկայած է, որուն վրայ յուլիս 17 ն ի վեր իւր գիտողութիւնը պիտի յայտնէր Ն. Սրբազնութիւնը, բայց տակաւին չէ յայտնած, մինչդեռ իւր յիշեալ շրջաբերականին հակառակ՝ Վարչութիւնը այն ծրագիրն իրեն զրկած էր, ժամ առաջ զարժանն անօրինելու համար :

Խնդիրն այս վիճակին մէջ եղած առեւ՝ յանկարծ լսեց Վարչութիւնը որ Ն. Սրբազ-

նութիւնն Ազգային Պատրիարքարանի դարաւոր իրաւանցն հակառակ՝ կը ջանայ եղեր թաղուն կերպիւ ուղղակի Բ. Դրնէն ստանալ իւր կաթողիկոսական պէրաքը, զոր ստանալ խոտոցեր էր արդէն Վարչութիւնն և այս մասին պէտք եղածն ի գործ դնելու համար իւր ջանքը զլացած չէր երբէք :

Յայտնի է որ Վարչութիւնն այս մասին չէր կրնար ուրիշ կերպիւ վարուիլ, բայց միայն պիտի փութար բողոքել, ինչպէս ըրած է և սրտատխտան ընդունած թէ՛ այդ պէրաքին ուղղակի տրուիլը դէ՞մ չէր ազգային իրաւասութեան քանի որ հին պէրաքներէն տարբերութիւն մը կամ նոր արտօնութիւն մը չէր պարունակէր :

Կաթողիկոսին տրուած պէրաքին օրինակը՝ Ս. Պատրիարքին բանակցութեանցը շնորհիւ՝ դատական գործոց Վսեմ. Նախարարին մէկ սրտածնագրովը Պատրիարքարան կը ղըրկուի, կը տեսնուի որ անոր մէջ Կաթողիկոսին նոր արտօնութիւն մը չտրուելէ զատ արդէն եղածը պոկուած է, որովհետեւ իսրաւալով Բաբրիքիկի տախիլինտե խօսքը չկայ, որ 500 տարուան արտօնութիւն մ'է :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Յանցաւոր եկեղեցականները պատժելու իրաւունքը՝ որ նոյն պէս դարերէ ի վեր Հայոց Պատրիարքարանի առանձնաշնորհուլ արտօնութիւն մ'է, որ Պատրիարքական և Կիլիկիոյ կաթողիկոսական պէրաքներուն մէջ յատկապէս կը նշանակուի, և զոր Հասուն Գերագոյցմառը միայն զոհած էր իւր պէրաքն ձեռք ձգելու աշխատած առեւ, այն ալ կը սրտակէր այս պէրաքին մէջ :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Մէկ կողմէ Վարչութիւնը Ս. Պատրիարքին բազրիրով կը բողոքէր պէրաքին մէջ տեսնուած պոկասին համար և միւս կողմէ մասնաւոր նամակ գրելով Ս. Կաթողիկոսին, կը պահանջէր որ պէրաքն իրեն զրկէ :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Իրմէ խընդրեցի պէրաքն ինձ զրկել, պէտք եղած դիտողութիւնն ընելու համար. բայց չզրկեց, ըսելով թէ օրինակն արդէն առած էի Բ. Դրնէն :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Եւ իւր շրջաբերականին նկատմամբ ալ փոխանակ ըսելու թէ արդարեւ գայթակղեցուցիչ է կամ որ և իցէ բացատրութիւն մը տալով զայն մեղմացնելու, « միթէ ստոյգ չե՞ն մէջի պարունակութիւնները » կըսէ :

Սակայն պէտք է յայտարարեմ թէ Վարչութիւնն այս խնդրոյն սկիզբէն ի վեր ամեն հաշտարար միջոց ի գործ դրաւ. և հարկ է որ սա ևս հաղորդեմ թէ՛ անցեալ ուրախ օր դարձեալ մասնաւոր տեսակցութիւն մ'ունեցայ Ս. Կաթողիկոսին հետ, այս սրտամտութիւնն իրեն ալ ըրի և ինք ալ համոզուեցաւ թէ Վարչութեան դիտաւորութիւնը չէ կրցեր հասնուլ Եւ ևս այնպէս կը կարծեմ թէ տակաւին յոստի է որ Կիլիկիոյ Կաթողիկոսը վերադառնայ այն հաշտարար սկզբունքին, որուն ի սկզբան չհամաձայնեցաւ :

Իրաց արդի վիճակին վրայ Ն. Սրբազնութեան ուղղորդութիւնն հրաւիրելէ ետեւ՝ կը մնայ տեսնել թէ ի՞նչ պիտի ընէ պէրաքը, զոր զըրկել խօտոցաւ, որպէս զի հայն հետ համաձայնեցնելը :

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Երկուշարթի պիտի զրկէր, այսօր հինգշարթի է, և տակաւին զրկած չէ :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Հիմա, Տեառք Երեւոթիսանք, Կարծեմ պարզուեցաւ խնդիրն և հակցուեցաւ թէ Վարչութիւնն ի՞նչ ընթացք բռնէր է : Վարչութիւնն ըրաւ, ինչ որ կըրնար ընել, սակայն գանգատները շատցան և Վարչութեան հաշտարար եղանակին դէմ Ս. Կաթողիկոսին բռնած տարօրէն ընթացքը տեսնելով, Վարչութեան կողմէ իբր սրկատու-

Թեան և յայտարարութեան արդիւնք կը նկատէին ոմանք, մանաւանդ երբ Կաթողիկոսն ինք ուղղակի պէրաք ստացաւ Բ. Գոնէն. և ցաւալի է որ վարչական պաշտօնատար Երեսփոխան մը, որ ի մօտոյ տեղեկութիւն ունէր խնդրոյն, այս կերպ ըմբռնեց և հրատարակեց, բայց խնդիրը պէտք է լաւ քննել և ըստ այնմ դատել:

Կիլիկիոյ Կաթողիկոսը մինչդեռ մէկ կողմէ Վարչութեան հետ կը բանակցէր, միւս կողմէ ալ թաղուն կերպիւ կաշխատի եղեր ուղղակի Բ. Գոնէն պէրաք ստանալ, այսպիսի պարագայ մը Վարչութեան համար ոչ կրնայ պակասութիւն համարուիլ, և ոչ ալ կրնայ իբր յարադրատուութեան արդիւնք նկատուիլ, որոց համար իրաւունք կը բողբեմք, որովհետեւ ուղղակի Բ. Գոնէն պէրաք ստանալն, ինչպէս բացատրեցի, Վարչութեան բռնած խոհեմ ընթացքին հետեանքը չէ երբէք, ուստի և այնպէս կարծելը բոլորովին սխալ է:

**ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Շատ կը ցաւիմ նկատելով որ Սոյ Ս. Կաթողիկոսը ազգին ներկոյ փափուկ կացութեան մէջ այսպիսի ընթացք մը բռնեց:

Յատկապէս գացի իրեն և անձամբ խօսեցայ որ զգուշանայ և դայթակղութիւն սրտաճառող ընթացքէ մը ետ կենայ, և զգացուցի իրեն թէ Ազգին մէջ հիմա Գէորգ Կաթողիկոսի խնդիր յարուցանելու ժամանակը չէ, զիջում և զսնդութիւն հարկաւոր է այժմ, մանաւանդ թէ շատ խոհեմութեամբ վարուելու ժամանակ է:

Պահ մը կը համոզուէր և իրաւունք կուտար ըսածներուս, բայց երբ Գէորգ Կաթողիկոսը միտքը կիյնար, ամեն բան կը մոռնար, ինչպէս կը մոռնայ նաև Սերաստիոյ Առաջնորդ Պետրոս Եպիսկոպոսին խօսածներն, որ իր բարեկամն ըլլալուն քանիցս զրկած է իրեն քով, որպէսզի պէտք եղածը խօսի ու ջանայ համոզել:

Սիւնի Եպիսկոպոսը, Խորէն Եպիսկոպոսը, Կարապետ Եպիսկոպոսը, Մասթէոս Եպիսկոպոսը նոյնպէս զրկեցի որպէս զի խօսին, և ասոնցմէ զատ՝ Տ. Մկրեանը, Տ. Հիւնրեարպէյէնտեանը և ուրիշ այնպիսի անձինք ալ զրկեցի թէ եկեղեցական և թէ աշխարհական դասէն, որոց վրայ ինք արդէն համարուած ունէր:

Ասոնց ամենքն ալ իրեն հետ մասնաւոր կերպով խօսեցան, հրախրեցին զինքն որ Վարչութեան հետ համաձայնի, և ըսին թէ Ազգը և Ազգային Վարչութիւնը կը կարգադրեն Գէորգ Կաթողիկոսին հետ ունեցած խնդիրն:

Աս իրեն շատ բան խօսեցայ և ըսի թէ սպառնալիք իբր այս ընթացքն պիտի դատարարուէ. ուստի և խնդրեցի, աղաչեցի որ խնայէ Ազգին:

Բայց տան ջանք անողուտ եղան. յամուեցաւ և մնաց այն ընթացքին մէջ զոր կը շարունակէր 1874 էն ի վեր. իւր նպատակն իմանալու համար իւր և Պատրիարքարանի մէջ եղած թղթակցութիւնները բաւական են անքամ մ'աչրէ անցնել:

Հոս մանրամասնութեանց մասնելու հարկ չկայ. Սոյ Կաթողիկոսին բռնած ընթացքը սրբոր Զուրբ մէջ ձուկ որթալու կը նմանի, բայց ես կը յառաջ թէ մեծ է Հայոց Աստուածն:

Այո՛, մեծ է, որովհետեւ այն որ սրտաբանեց Հայոց ազգն ա՛յնքան հարածանայ, նեղութեան, սրածութեան, սովու և տառապանոց դէմ, կը սրահարանէ նաև ներքին հարուածներէ ալ:

Եւ զիտէ՞ր ինչ է նպատակը, դիտաւորութիւնն և ուղածը. — բոլոր Առաջնորդներն ինք անուանէ ինք հրաժարեցնէ, իր կոմայն համեմատ կառավարէ, մարդ իր ըրածին չխառնուի, Պատրիարքարանը չմիջամտէ իւր գործին, չհսկէ իւր վրայ և ինքն անարգել ուզածն ընէ, ասոնց մէկու մը սրտասախանատու ըլլալու:

Կիլիկիոյ Ժողովուրդն՝ իր ըրածներէն զըժգոհ՝ պաղած է իրմէ: Բազմութիւ գանգատանոց հանրագրեր զրկած է ի Պատրիարքարան, և Առաջնորդներն ալ բնաւ չեն սիրեր զինքն, որովհետեւ չարաչար և ապօրինաւոր եղանակաւ կը վարուի իրենց հետ. ասոր համար յաճախ գանգատած են իր վարմանքէն:

Քանի բանի անգամ զիր գրեցի իրեն որ երթայ Սիւնաթի. Կիլիկիոյ վիճակները բարեկարգէ և Սահմանադրութիւնը դործողը: Ասոնց և ոչ մէկուն կանսար, միշտ իր միտքը դրածը կուզէր կատարել. միշտ Գէորգ Կաթողիկոսին վրայ կը մտածէր և այնպիսի որսահանջումներ կընէր, զորս դուր խկ, Երեսփոխան Տեարք, բոլորովին մերժած էք, իբրև ազգային շահուց հակառակ:

Ինքը բնաւ չուզեր Սահմանադրութեան համեմատ վարուիլ, որուն ազգեցութիւնը Կիլիկիայէն դուրս կը նկատէ, և չուզեր որ Պատրիարքարանի իրաւասութեան և հսկողութեանը ներքև դնուի, այլ կուզէ քը Կիլիկիան ազգային միութենէն դատարի:

Ահա այս ամենուն համար է որ Ժողովուրդըն իրեն չհամամիտի, և ինչ ցու որ ունենայ միշտ ի Պատրիարքարան կը զիմէ, որովհետեւ Կաթողիկոսն իրմէ զատ ուրիշ բանի համար չաշխատի, և Ժողովրդեան ինձ զիմելուն համար ալ քը ցաւի. կուզէ որ իրեն զիմէ ուղղակի և ասոր համար ալ գրած և պահանջած է ինձմէ որ Ժողովուրդին այս խմտատով զիր գրեմ:

Ասոնք և ասոնց նման բաներ են իր ուղածներն, և ահա այս նպատակին հասնելու կը ձգտին իւր բոլոր ջանքերը:

Բայց քանի որ չունչ ունիմ, պիտի որդիւն այդ ազգամիլաս ձգտումներն ու մարտիմ անոնց դէմ:

Արդ, Տեարք Երեսփոխանը, ինչպէս կրնայ ըսուիլ թէ Կաթողիկոսին այս ընթացքը Վարչութեան թուրութենէն յառաջ եկած է: Վարչութիւնն ամեն բան ըրաւ, փորձեց ամեն

հաշտարար միջոցներն, ամեն հնարք բանեցուց և շատ խոհեմութեամբ վարուեցաւ, բայց կը ցաւիմ ըսելու որ Նա դեռ չփոխեց իւր ընթացքն:

**ՇՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — [Շարունակելով]**

Կը յուսամ թէ այս փափուկ խնդիրն ազգային շահուց համեմատ կարգադրելու համար, հաշտարար եղանակաւ մը Կիլիկիոյ Կաթողիկոսը համոզել ջանալն յանցանք չսեպուի, և հետեւարար ո՛չ Սրբազան Նախագահին, ո՛չ իմ և ո՛չ իմ սրտուարժան ընկերակցացս վրայ այս առթիւ պատասխանատուութիւն մը չձանրանար:

Պարտք կը համարիմ խոստովանիլ թէ ամենատեն որ Ս. Կաթողիկոսին հետ բանակցութիւն ունեցայ, հանգարտ սրտով դուրս կելլայի, վասնզի կը տեսնէի որ կը համոզուէր և կըսէր, դադարարով արդէն մի կմք, բայց՝ ինչպէս ըսաւ Ս. Պատրիարքն՝ երբ էջմիածնոյ Կաթողիկոսին անուեը միտքը կիյնար, կը մտնար բոլոր իր ըսածներն և լսածները:

Յոյս ունիմ սակայն որ խնդիրն համաձայնութեամբ պիտի վերջանայ վասնզի բանակցութիւնը դեռ կը շարունակեն, և ի սրտասախանի Թիւրքիստանէն Էթի. հարցման այսքան բացատրութիւն տալէ ետև, Վարչութիւնը կը փախարի թէ Ազգ. Ժողովը թողաւ որ բանակցութիւնը շարունակեն, հետեւարար պէտք է առ այժմ բաւական համարիլ այսչափ խօսք և սպասել, մինչև որ կարելի ըլլայ Վարչութեան և Կիլիկիոյ Կաթողիկոսին մէջ համաձայնութիւն մը դոյացնել, որ յուսայի է, և եթէ անկարելի ըլլայ՝ այն ատեն խնդիրը դարձեալ ձեր որդմանը կը ներկայանայ:

**ԱՐԵՍԱՐՈՒՆԻ Տ. ՅՈՎ.Վ. — Երեսփոխան**

Էթիէնտի կըսէր թէ Վարչութիւնն իր սկսած բանակցութիւնն յառաջ տանելու և համաձայնութիւն մը դոյացնելու նպատակաւ խոհեմութեամբ և չափաւորութեամբ վարուած ըլլաւ:

լուն համար կրնա՞յ միթէ իւր հաշտարար եղա- նակին մէջ սխալ բայլ մ'առած համարուի :

Տարակցս չկայ թէ ո՞չ երբէք , եւ ժողո- վըս ալ արդէն համազուած է որ Վարչութիւ- նը խղճի մտօք կատարած է իւր պարտականու- թիւնը :

Բայց բուն խնդիրը սա է թէ՛ Տ. Մ. կա- թողիկոսն որ հաս այս մեղադրելի վարմունքն ունեցաւ Վարչութեան հետ , հոն կիլիկի- րս վերադարձած տանն արդեօք ի՞նչ աւելի ծանր ու եպերելի արարքներու մէջ չսխալի գտնուի :

Խիստ հաւանական է թէ հոն շատ բա- ններ պիտի ըսէ եւ շատ բաներ պիտի ընէ , զորս վտան եմ թէ Վարչութիւնը խիստ լաւ նախատեսելով , պիտի չուզէ խնդիրը բարակ թելով մը կտայել , այլ ամեն հաւանականու- թիւն որ անյուսալի չէ Մկրտիչ կաթողիկո- սէն ի հաշիւ առնելով պիտի աշխատի համա- ձայնութիւն գոյացնելու :

Աւստի այսքան բացատրութիւն լսելէ ե- տե՛ւ թողումք Վարչութեան որ իր սկսած գործն ի գլուխ հանէ յաջողութեամբ , որուն ամենքս ալ կը փափաքեմք ի սրտէ :

ԹԻՒՆՊԵՆՏՏԵԱՆ Ն. ԷՖ. — Տեա՛րք Երես- փոխանք , գիտենք ամենքս ալ որ կարգադրե- լիք գործերնիս շատ են , իսկ ժամանակնիս շատ քիչ է . ուստի երկարօրէն չպիտի խօսիմ , այլ միայն երկու վայրկեան պիտի խօսիմ , ո- րուն համար ձեր ուշադրութիւնը եւ ներողա- մըտութիւնը կը խնդրեմ :

Եռասուֆեան Էֆէնտի հաճեցաւ իմ հարց- մանցս վրայ յուսացածէս աւելի երկարօրէն բացատրութիւն տալ : Ես իմ հարցմանցս մէջ ըսած էի թէ կիլիկիոյ կաթողիկոսն ընդունա՞ծ է 1876 փետր. 20 ի ծրագիրը , զոր Ազգ. ժո- ղովն վաւերացուցած է , եւ թէ մինչեւ ցարդ կը շարունակէ՞ տակաւին իւր դժկամակու- թիւնը :

Վարչութեան տուած բացատրութիւնն

բէն կերեւոյ թէ կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրն երեք ճիւղի կը բաժնուի , Ա. յարա- բերութիւն ընդ մէջ Էջմիածնայ եւ կիլիկիոյ , Բ. յարաբերութիւն ընդ մէջ կիլիկիոյ եւ Կ. Պօլսոյ , եւ Գ. յարաբերութիւն ներքին մասին՝ ընդ մէջ ժողովրդեան եւ կիլիկիոյ կաթողի- կոսին :

Տրուած բացատրութիւններէն գոհու- թեամբ կը տեղեկանամք թէ կիլիկիոյ վիճա- կաց մէջ վարչական բարենորոգումնք գործադ- րել տալու համար Վարչութիւնը մեծ ջանքեր ըրեր է :

Վարչութեան այս ջանքը շնորհակալու- թեան արժանի է :

Իմ հասկնալ ուզած կէտս գլխաւորաբար խնդրոյն առաջին մասն է , որովհետեւ միւս երկուքն անկէ ետքը կուգան , եւ ես սակայն չբաժնելու համար հարցուցեր էի թէ 1876 փետր. 20 ի նստին մէջ Ազգ. ժողովոյ վաւե- րացուցած ծրագիրը , զոր ընդունած եւ ստո- բագրած է Ազգամարայ կաթողիկոսն , եւ կի- լիկիոյ կաթողիկոսին համար ալ ապահովու- թիւն արուած է թէ օժման ժամանակ իւր տուած խոստմնագրին համաձայն կընդունի եւ պարտաւոր է ընդունիլ , արդեօք ընդունած եւ ստորագրա՞ծ է Տ. Մկրտիչ կաթողիկոս , որուն գլխաւոր պայմանն է ձանչնալ Էջմիած- նայ Ս. կաթողիկոսին գերագահութիւնը :

Եռասուֆեան Էֆէնտի կըսէ թէ Կրօնային Ատենի առաջարկութեանց՝ որ նոյնին մէկ հա- մաօտութիւնն է , ինչ ինչ կէտերն սկսած է գործադրել , բայց ինչպէս որ կըմբռնեմ , պայ- մանաւոր չէ , այսինքն ստորագրած չէ տա- կաւին :

Վարչութեան դէմ ալ իւր ըմբոստու- թիւնը կը շարունակէ , եւ ինչպէս գիտել տըր- ուեցաւ , իւր շրջաբերականով փորձ կը փոր- ձէ եղեր կիլիկիոյ ժողովուրդը Վարչութեան դէմ գրգռել :

Յաւալի է որ Մկրտիչ կաթողիկոս տա- կաւին համաձայնած եւ ստորագրած չէ Ազգ. ժողովէն ընդունուած եւ վաւերացուած 1876

փետր. 20 ի ծրագիրն , ուր ճշդուած եւ սահ- մանուած են կիլիկիոյ կաթողիկոսին յարաբե- րութիւնքն՝ Էջմիածնայ Ս. կաթողիկոսին , Պօլ- սոյ Պատրիարքարանի եւ կիլիկիոյ գաւառա- կան վարչութեանց հետ :

Իւր ըմբոստ դիրքն եւ ցոյց տուած յա- մառ դժկամակութիւնն արդարեւ ցաւալի պա- րագայ մ'է , բայց Ազգ. Վարչութեան իմաս- տութենէն կը յուսամ որ կը յաջողի վերջապէս իւր բանակցութեանցը մէջ եւ թող չտար որ Էջմիածնայ գերագահ Աթոռոյ նուիրական ի- բաւունքները Մկրտիչ կաթողիկոսին դժկամա- կութեանցը դոհուին :

Աւստի կուզեմ եղբակացնել որ՝ եթէ Մկրտիչ կաթողիկոս չընդունի 1876 փետր. 20 ի ծրագիրն եւ իւր ըմբոստութիւնը շարունակէ , չկրնար կաթողիկոսական պաշտօն վարել , եւ հետեւաբար կիլիկիոյ կաթողիկոսութենէ :

Այս կէտը Մայր-Գիււանի ուշադրութեանն յանձնելով կը վերջացնեմ խօսքս եւ կը փու- թար շնորհակալութիւն յայտնել Ազգ. Վար- չութեան , որ մէկ կողմէ կաշխատի կիլիկիոյ զարգացմանն եւ բարեկեցութեանն , եւ միւս կողմէ ալ Էջմիածնայ գերագահ Աթոռոյ դա- րաւոր նուիրական իրաւանց անվթար պահ- պանութեանն համար :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Տեա՛րք Երեսփո- խանք , Սոյ խնդիրն ինձ համար ազգային պատմութեան մէջ չձանչցուած նոր խնդիր մը չէ :

Եղած են ժամանակաւ այնպիսի կաթողի- կոսներ որ նոյնպէս շատ ծանր մնասներու պատճառ եղած են , իրենց կոնակը զօրութիւն մ'առնելով եւ օտարաց գործիք ըլլալով :

Ներկայ պարագայից մէջ ալ ծանր խնդի- րը Սոյ կաթողիկոսին Բ. Գրնէն ուղղակի պի- րաք առնելն է :

Սակայն ինձ համար աւելի ծանր այսպի- սի անձ մը կաթողիկոս ընտրելն է :

Մկրտիչ կաթողիկոսի անցեալը զաղանիք

մը չէր . սա ձանչցուած էր Եգիպտոսի Առաջ- նորդութեան պաշտօնին ժամանակ ըրած գոր- ձերոյն եւ համաճարակ ախտի ժամանակ բաղ- մաթիւ ազգայիններ բանտարկել տալովն :

Եւ երբ այսպէս մօտէն կը ձանչնանք կի- լիկիոյ կաթողիկոսին անձը , պէտք չմնար զար- մանալու թէ Ազգին մէջ բաժանումներ ձգե- լու կը նկատի , Սահմանադրութիւնը կիլիկիա- յէն դուրս կը նկատէ , Պատրիարքարանի իրա-ւասութեան տակ չմնալու փորձ կը փորձէ , իր պայմանը չյարգէր եւ Ազգ. ժողովոյ որո- շումը չընդունիր , եւ ին. եւ ին :

Ասել է թէ կորուստը մինք բուն իսկ մեր ձեռքոյն ըրինք , եւ ես ահա ասոր համար է որ այս ըրածին ալ չեմ դարմանար . . . :

( Բողոքոյ ձայներ )

ԻՓԷՔՃԵԱՆ Է. ԷՖ. — Ես ալ ինչպէս չը զարմանամ Սուրէնեան Էֆէնտի վրայ որ այս- քան անվայել կերպով կը խօսի բարձրաստի- ճան Եկեղեցականի մը անձին նկատմամբ :

Եւ արդէն խնդրէն կը շեղի ատենաբանը , բուն խնդիրն ընդ մէջ Սոյ եւ Էջմիածնայ յարաբերութեան խնդիրն է . մենք ատոր վրայ պէտք է որ վիճարանիմք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բացուած խնդիրը մի- այն Սոյ կաթողիկոսին ընթացից եւ այդ նը- կատմամբ մեր Վարչ. Խորհրդին ըրած տնօրի- նութեանց վրայ տեղեկութիւն առնուլ է , եւ անոր վրայ միայն կրնայ խօսուել ժողովոյս մէջ : Իսկ երբ ուզէք որ յարաբերութեան խնդ- յիրը վիճարանութեան ենթարկի , գորա հա- մար մասնաւոր առաջարկութիւն պէտք է բե- րէք , որպէս զի ժողովն ուշադրութեան առ- նու զայն : Վասն զի այժմ Էջմիածնայ կաթո- ղիկոսութեան , կամ ընդ նմին յարաբերու- թեան խնդիր չկայ բացուած : Հարցում մը կար Սոյ կաթողիկոսին նկատմամբ , որոյ վրայ Վարչութեան տուած բացատրութիւնը լսեցիք :

եթէ գոհացուցիչ կը դռնէք զանոնք, թողու՛մք Վարչութեան, որ սկսած գործն ի գլուխ հանել աշխատի, իսկ եթէ կուզէք որ տակաւին խօսուի խնդրոյն վրայ, թողէ՛ք որ ատենաբանը շարունակէ իւր խօսքը:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Վարչութիւնն ըստ թէ՛ ձգեցէ՛ք խնդիրն ինձ որ վերջացընեմ, եւ եթէ չկրնամ ի գլուխ հանել, այն ատեն դարձեալ Ձեզ կը բերեմ:

Շատ աղէկ, բայց ես կը փափաքիմ որ խնդիրը հոս լուծուի, որովհետեւ Վարչութեան տուած բացատրութիւններէն կը տեսնեմ թէ խնդիրն իւր լուծումն ընդունելու մօտ չէ, եւ հետեւաբար պէտք է որ հոս յուզուի այն:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Կը տեսնեմ որ մեր բաղդը շարունակ ասանկ կերթայ. կարեւոր խնդիրներ միշտ ետ կը մնան, օրակարգի խընդիրները կը յետաձգուին, եւ ժողովս միջանկեալ խնդիրներով կը զբաղի:

Օրակարգին մէջ թաղային մատակարարութեան եւ դաստիարակութեան ծրագրի կարեւոր խնդիրները կան նշանակուած: Կը ցաւիմ որ այսպիսի կենսական խնդիրներ ետ կը մնան, եւ Երեսփոխանի մը հարցումով միջանկեալ խնդիրներ նախապատուութիւն կտանան, մեր ժամանակը կը վատնեն երկարատեւ վիճարանութեամբ: Սոյն կաթողիկոսական խնդրոյն վրայ Վարչ. Խորհրդոյ Ատենապետ Ծուսութեան Էֆէնտի տուաւ պէտք եղած բացատրութիւնն եւ Ս. Նախագահն ալ նորա թերին լրացուց: Դուք կրնաք ճանչնալ Սոյն Աթոռն ու կաթողիկոսը. այսօր այս խնդրոյն վրայ երկարօրէն վիճարանիլ հարկ չէ: Ուստի փակեմք վիճարանութիւնն եւ ձգեմք այս խնդիրը Ս. Պատրիարքին եւ Վարչութեան որ սկսած գործերնին շարունակեն եւ հետեւանքը մեզի տեղեկագրեն:

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Թէեւ խօսք ուղած էի, բայց Շահպաղ Էֆէնտիի խօսքերէն ետեւ ըսելիք մը չմնար ինձ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութիւնը փակելու առաջարկութիւն կը լլայ, եւ Հովուեանն ու Թորոսեանն Էֆէնտիներու կողմէ ալ պատճառաբանեալ օրակարգի սա գրաւոր առաջարկութիւնը կը ներկայանայ Մայր-Դիւանին:

«Ազգային ժողովը լսելով Կիլիկիոյ կաթողիկոսութեան նկատմամբ պատկառելի Վարչութեան պատասխանը, այս մասին Վարչութեան կողմանէ ձեռք առնուած միջոցներն խոհեմութեան եւ պարագայից պատշաճութեան ըստ ամենայնի համաձայն կը դռնէ, եւ սոյն խընդրոյն լուծումը պատկառելի Վարչութեան խոհեմութեանը յանձնելով կանչնի օրակարգին »

Խնդիրը Թիւրքիստան Էֆէնտիի հարցումէն ծագեցաւ, եւ այդ հարցումն երկու կէտ կը պարունակէր: Հարցման հեղինակը ստաջին մասին համար Վարչութեան տուած բացատրութենէն գոհ ըլլալ կը յայտնէ: Գալով երկրորդ մասին, նորա իմաստը սապէս կըրնայ ամփոփուիլ թէ՛ Ս. Մկրտիչ կաթողիկոս եթէ շարունակէ իր ըմբոստութիւնն ընդդէմ ազգային օրինաւոր եւ նուիրական իշխանութեանց, Ազգն զՆա պաշտօնանկ ընելու իրաւունքը չպիտի գործադրէ: Բայց հարցանող Երեսփոխանն առ այժմ չպնդէր այս երկրորդ կէտին վրայ եւ զայն Մայր Դիւանի ուշադրութեան յանձնելով, գոհութիւն կը յայտարարէ Վարչ. Խորհրդոյ ընթացքէն, զորմէ տեղեկացաք նորա Վսեմ. Ատենապետ Էֆէնտիին սըուած բացատրութեամբը:

Այդ բացատրութիւնը ժողովն ալ գոհ ըրած լինիլ կը թուին, վասն զի Շահպաղ Էֆէնտի

տի բերանացի եւ Հովուեանն ու Թորոսեանն Էֆէնտիք գրաւոր կերպիւ կառաջարկեն փակել խնդիրն, Վարչութեան խոհեմութեանը յանձնելով զայն:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. Այս ժողովն Ազգին օրինաւոր ներկայացուցիչն է: (Ձայներ — Անշուշտ): Կիլիկիոյ թեմերն ալ ներկայացեալ են հոս իրենց երեսփոխաններով: (Ձայներ. — Այո): Ուրեմն այս ժողովին հեղինակութիւնն անոնց վրայ ալ կը տարածի. եւ սակայն Ս. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիոյ սահմաններէն դուրս կը նկատէ: Սահմանադրութիւնն եւ չուզէր գործադրել զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայր, ո՛չ ոք կրնայ տարակուսիլ սոյն պատկառելի ժողովոյն Ազգին օրինաւոր ներկայացուցիչն ու անոր բարձրագոյն հեղինակութիւնը լինելուն վրայ: Հետեւաբար ամբողջ Կիլիկեան թեմերն իրենց ժողովուրդներովն ու Ամեն. կաթողիկոսովն այս Ազգ. ժողովոյ իրաւասութեան ենթարկեալ են:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կիլիկիոյ ժողովուրդն ալ ճիշդ այդպէս կընդունի, եւ Ս. Մկրտիչ կաթողիկոսին Կիլիկեցիներէ կարգած Յանձնաժողովն երեկ զիր մը բերաւ ինձ, որ հինգ յօդուածէ կը բաղկանայ, եւ Էջմիածնայ Ս. կաթողիկոսին Սոյն կաթողիկոսութեան նըկատմամբ բռնած ընթացքին դէմ ցաւ եւ դանդաղ կը յայտնէ. Ս. Մկրտիչ կաթողիկոսին ազգային միութենէն բաժնուելու նկըրտման դէմ կը բողոքէ. Կիլիկիոյ մէջ Սահմանադրութեան գործադրութիւն կը պահանջէ, եւ կաթողիկոսական իրաւասութեանց եւ յարաբերութեանց կանոնաւորիլն այս ժողովն կը խնդրէ:

Եթէ հոս է այդ գիրը, խնդրեմ կարդացէք, Եուսուֆեան Էֆէնտի:

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (Ատենապետ Վարչ. Խորհրդոյ) Հո՛ս է, Սրբազան Հայր, բայց այդ գիրն երկրորդ կէտին կը վերաբերի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս քիչ մ'առաջ ամփոփեցի, հարցման հեղինակը գոհ եղաւ լսած բացատրութենէն, եւ թուի թէ գոհ եղաւ նոյնպէս ժողովին մեծամասնութիւնն, վասն զի փակման առաջարկութիւններ ներկայացան, որոցմէ Հովուեանն եւ Թորոսեանն Էֆէնտիներուն միաբան ներկայածը գրաւոր լինելով, զայն Ձեր քուէին պիտի ենթարկեմ: Ուստի կը խնդրեմ խօսք առնող Երեսփոխաններէն որ այս կէտին վրայ իրենց կարծիքն յայտնեն:

ԻՓԷՔՃԵԱՆ Հ. ԷՖ. — Խնդրոյն լուծումը բացարձակապէս Վարչութեան յանձնուի, այլ վերջացնելն ետեւ ժողովիս տեղեկագրելու պայմանաւ, վասն զի ժողովս Վարչութեան բացատրութիւնները լսելով Կիլիկիոյ կաթողիկոսը դատապարտած չեղաւ, եւ առանց զինքը լսելու՝ ժողովս չէր կրնար ի բացակայութեան նորա դատապարտել, եւ Վարչութիւնն ալ՝ պաշտօնանկ ընել զնա:

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Ես ալ կը կարծեմ թէ առանց զինքը լսելու դատապարտելն արդարութեան դէմ է, որ մեզ ներելի չէ, եւ Հովուեանն ու Թորոսեանն Էֆէնտիներու առաջարկութիւնն ընդունելով ժողովս զկաթողիկոսն ի բացակայութեան դատապարտած կը լլայ, եւ մենք ինչպէս կրնանք առանց քըննութեան վճիռ տալ:

Երբ կաթողիկոս մը ազգային իրաւանց դէմ շարաչար վարուեր է, ինչպէս կըսէ Վարչութիւնը, պէտք է որ քննութիւն եւ դատաստան ընեմք, լսեմք զկաթողիկոսն եւ այն ատեն ըստ օրինի դատապարտութեան վճիռ տամք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը ցաւիմ որ սխալ ըմբռնուած է խնդիրն :

Երբ Վարչութիւնը խնդրոյ մը նկատմամբ բացատրութիւն կուտայ եւ ժողովն այդ բացատրութենէն դո՛ւ եղայ կրտսէ, խնդրոյն ենթական դատապարտած չըլլար բնաւին :

Վարչութեան տուած բացատրութիւնը վճիռ չէ, հարցման մը պատասխան է, զոր եթէ դո՛ւ ցուցնիլ զանէք, խնդիրը կը փակուի. իսկ եթէ դո՛ւ ցուցնիլ չզանէք, հարցումն հարցապնդման կը փոխէք եւ վիճարանութեան համար որ կորոչէք, Հետեւաբար Տ. Մկրտիչ կաթողիկոսն այսօր դատապարտելու խնդիր չը կայ, որպէս զի արխիպիոյ դատապարտելու անիրաւութիւն գործելէ խորշէք :

Խնդիրը սա է. Սոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսի ընթացից նկատմամբ Վարչութեան հետեւած ուղղութենէն, զոր բացատրեց ժողովոյս Եռսուֆեան Էֆէնտի, եթէ դո՛ւ էք, պիտի փակէք այժմ խնդիրը Ձեր քուէով ըստ ներկայացեալ առաջարկութեան, եւ Վարչութեան պիտի թողուք ի զլուխ հանել իւր սկըսած գործն. իսկ եթէ Ձեր քուէին արդիւնքն ասոր հակառակը լինի, այն ատեն դարձեալ պիտի խօսինք որոշելու համար թէ ի՞նչ ընել կուզէք :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Յանուն Վարչութեան ըրած առաջարկութիւնս արդէն համաձայն է Իփէքճեան Էֆէնտիի յայտնած կարծեաց :

ՁԱՅՆԵՐ. — Քուէ՛, քուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Իփէքճեան Էֆէնտիի առաջարկած պայմանն ալ կը յաւելուիք ներխայցեալ առաջարկին, եւ այդ բարեփոխութեամբ կը քուէարկեմք զայն :

Ահաւասիկ այսպէս :

« Ազգային ժողովը լսելով Կիլիկիոյ կաթողիկոսութեան նկատմամբ պատկառելի Վարչութեան պատասխանն, այս մասին Վարչութեան կողմանէ ձեռք առնուած միջոցները խոհեմութեան և պարզայից պատշաճութեան ըստ ամենայնի համաձայն կը դանէ, և սոյն խնդրոյն կարգադրութեան հետամտութիւնը կատարեալ վրտահոսութեամբ պատկառելի Վարչութեան խոհեմութեանը կը յանձնէ, ընդ փոյթ տեղեկագրելու պայմանաւ, և կանցնի օրակարգին » :

Ատենապետ Էֆէնտի քուէի կը դնէ սոյն բարեփոխեալ բանաձեւն, եւ ժողովն երեք ձայնի զէմ մեծամասնութեամբ ԿԸՆԴՈՒՆԻ զայն :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Այս խնդիրն այսօր չենք կրնար լուծել, որովհետեւ ժողովին փակման ժամն անցած է, ուստի կը բողոքեմ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյն այդ մասը վերջացաւ եւ անոր վրայ խօսելու ժամանակն անցաւ :

Այժմ ժողովոյ նկատողութեան արժանի կէտն այն է թէ՛ Սոյ կաթողիկոսական խնդրոյն ներկայ վիճակին մէջ հարցման երկրորդ կէտին վրայ վիճարանութիւն բանալ կուզէ՛ :

Ահաւասիկ ընդարձակ ասպարէզ, երբ ժողովն ուզէ երկրորդ կէտին վրայ վիճարանութիւն բանալ, այն ատեն կրնաք ուղածնուդ չափ խօսիլ :

ՄԿՐԵԱՆ Տ. ՅՈՎ. ԲԱ. — Հիմա ատոր ատենը չէ. այսօրուան խնդիրը կաթողիկոսական պերարին առթիւ Վարչութեան և կաթողիկոսին մէջ եղած բանակցութեան խընդիրն է :

Վարչութեան բացատրութիւնը լսելով դո՛ւ ցուցնիլ զտանք զայն, եւ վստահութիւն յայտնելով յանձնեցինք իրեն ի զլուխ հանել խնդիրն որ տակաւին վերջնական լուծումն առած չէ :

Վարչութիւնն յուսահատ չէ, կը յուսայ որ համաձայնութեամբ կարգադրէ. եւ երբ չյաջողի, խնդիրը հոս սլտի բերէ. ուստի այդ երկրորդ կէտն այն ատենին պէտք է պահել ըստ իմ կարծեաց :

ՅՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Թիւլպէնտեան Էֆէնտիի յարուցած խնդրոյն երկրորդ կէտը Վարչութեան ձեռք առած միջոցները լրանալէն ետեւ կրնայ ծագիլ. բայց հիմայ այդ խնդիրն յուզել բողոքովն անպատեհ կը զըսենեմ, որովհետեւ խնդիրը տակաւին այն վիճակին հասած չէ, երբ ժամանակը գայ, այն ատեն պէտք եղածը կընեմք : Ուստի հարցման երկրորդ կէտին մերժումը կառաջարկեմ. եւ եթէ հարկ ըլլայ, նախաձեռն իսկ կառաջարկեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրոյն փափուկ փիճակը չըջանայեցութեամբ նկատողութեան առնել հետեւ արդեօք աւելի պատշաճ չթուի՞ր Ձեզ յայտարարել յատենն աստ որ, եթէ Տ. Մկրտիչ կաթողիկոս չուզէ զիջանիլ ազգային իրաւանց և շահուց առջեւ, Վարչութիւնը պիտի վերջացնուի չարագիլ ժողովոյս խնդրոյն վիճակն, եւ այն ատեն անմիջապէս նկատողութեան պիտի առնու ժողովս թէ՛ Սոյ Տ. Մկրտիչ կաթողիկոսն իւր այդ աղբալեաս վիճակին մէջ պէ՞տք է մնայ կաթողիկոս, թէ ոչ :

( Յամենուստ հաւանութեան ցոյցեր )

Հետեւաբար Ատենապետ Էֆէնտի մասնաւոր յանձնարարութեամբ կը խնդրէ Վարչական Խորհրդէն որ եթէ Տ. Մկրտիչ կաթողի-

կոս չզիջանի ազգային հեղինակութեան եւ շահուց առջեւ, ընդ հուպ տեղեկագրէ խընդիրն առ ժողովս, որպէս զի Տ. Մկրտիչ կաթողիկոսին այնուհետեւ Սոյ կաթողիկոսն վրայ մնալու խնդիրն անմիջապէս ի նկատ առնուի, եւ այսպէս խնդիրը կը փակուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենը փակելու ժամը լրացած լինելով, ատեն շինաց օրակարգը ձեռք առնու : Ուստի ատեննի փակումէն առաջ կը ներկայեմ Ձեզ մի քանի մասնաւոր խնդիրներ, որը Գիւանիս վրայ են եւ որոյ անօրինմունք երկար ատեն չեն պահանջեր :

Բարեփոխում  
ի վերայ կրթական ծրագրի.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրթական Խորհրդականութեան կողմէ ազգ. վարժարանաց Ընդհ. Տեսուչ Իփէքճեան Էֆէնտիի պատրաստած կրթական ծրագրին նմանապէս եւ Ատենապետաց Գիւանի բարեփոխման ծրագրին հաղորդուած են Ձեզ. այժմ Իփէքճեան Էֆէնտի նոր բարեփոխմանց առաջարկութիւն մ'ալ բերած է, եւ ստիպան զայն այժմ կարգաւն անօրուս կըլլայ, մանաւանդ թէ ժամանակ ալ չկայ. ուստի կանցնելք զայն ատենագրութեան մէջ եւ այսպէս աւելի զիւրաւ կարող կը լինիք կարգալ եւ բմբունել զայն, խնդիրը բացուած օրը պատրաստուած ըլլալու համար :

Ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ այս կարգադրութեան

§ Յապաղեալ գրութիւնք

Ատենապետ Էֆէնտի իրր պարզ տեղեկութիւն կը հաղորդէ ժողովին, թէ Գափամա-

Տեան Մինաս Էֆէնտի կողմէ հրաժարագիր մը  
և Տ. Մատթէոս Եպիսկոպոսի կողմէ ալ բո-  
ղոք մը կայ, որք ատենանին բացումէն յետոյ  
Մայր Դիւանին աւանդուած ըլլալով չպիտի  
կրնան ներկայացուիլ այսօր և յառաջիկայ  
նստին պիտի մնան:

Աճճնական դեպ

Իփէքճեան Էֆէնտի անձնական զէպի հա-  
մար խօսք ուղած լինելով, Ատենապետ Է-  
ֆէնտի կը հրաւիրէ զնա խօսք առնուլ, բայց  
Երեսփոխանաց մի մասը մեկնելու վրայ ըլլա-  
լուն պատճառաւ, Իփէքճեան Էֆէնտի յառա-  
ջիկայ նստին կը վերապահէ իւր խօսքն:

Բացակայութիւնք .

Ատենապետ Էֆէնտի ժողովոյ կը հաղորդէ  
երրորդ բացակայութիւն ունեցող հետեւեալ  
Երեսփոխանաց անուններն ,

Տ. Գրիգոր Քահ. Աճէմեան , և

Միհրան Էֆէնտի Պահճէգարուլեան ,

որք յառաջիկայ նստին համար ազդագիր պի-  
տի ընդունին ըստ օրինի:

Ատենը կը փակուի ժամ 6 ին յաջորդ  
նիստը 15 օրէն գումարելու որոշմամբ:

Առժամեայ Ատենագրպիր

Գ. ՉԵՐԱԶ

Ատենապետ

Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

ԲԱՐԵՓՈՒՈՒՄ

Ի ՎԵՐԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

Մեծապատիւ Կրթական Խորհրդական  
Էֆէնտի Ազգային Կեդր. Վարչութեան

Ազգային ժողովը Կրթական օրինաց  
ճրագիրը, ինչպէս զխտէք, Ատենապե-  
տաց և Դաստիարակութեան միացեալ  
Դիւանաց քննութեան յանձնած էր:  
Միացեալ գիւանք իրենց քննութիւննե-  
րն աւարտելով — որոց միշտ ներկայ  
գտնուեցայ — բարեփոխութեանց խոր-  
բազրութիւնը Դաստիարակութեան Դի-  
ւանի Ատենապետ Մեծ. Ռ. էֆ. Պէր-  
պէրեանի և ինձ, իսկ խմբագրութեան

վերջնական քննութիւնը Մեծապատիւ  
Առաքել Ալթուն Տիրբի և Քրիստոսաուր  
Ղաղարօսեան Էֆէնտիներուն յանձնեցին:  
Խմբագրութիւնը և վերջնական քննու-  
թիւնը կատարուելով բոլոր արձանա-  
գրութիւններն յանձնուեցան Մեծ. Ա.  
առաքել էֆ. Ալթուն Տիրբիի:

Բարեփոխութեանց մեծագոյն մտ-  
քը համաձայնութեամբ կատարեցինք,  
բայց քանի մը կարևոր Յօդուածոց բա-  
րեփոխութեանց մասին չլրցայ համա-  
ձայնիլ, Տեղի ունեցած բոլոր բարեփո-  
խութիւնները նշանակուած կը գտնէք  
ճրագրի լուսանցին վրայ, աստ հարկ

կը համարիմ նշանակել միայն այն բա-  
րեփոխութիւնները որք իմ տեսութեամբ  
կամ ընդունելի չեն և կամ աւելի օգ-  
տակար բարեփոխութիւն կրնան ստա-  
նալ:

ՅՕԴՈՒԱԾ 36 ա. — « Իւրաքանչիւր թաղ  
կունենայ կրթական հաստատուն եկամուտ և  
արկղ »:

Բ. — « Հաստատուն եկամուտ կը կազմեն  
1. Յանուն դպրոցին կալուածք, վազըֆը,  
կտակը և հաստատուն եկամտի սահմանեալ  
նուէրք. — 2. Թաղին կամ եկեղեցւոյն սրատ-  
կանեալ միւս կալուածոց և վազըֆոց 2/3 մաս-  
ը. — 3. Թաղային սնտուկին հաստ թից 5 % Ը.  
— 4. Յանուն թաղին կամ եկեղեցւոյն եղած  
այն կտակներն ու նուէրները որք որոշեալ  
նպատակ կամ նպատակին համաձայն գոր-  
ծադրութիւն չունին. — 5. Նուէրք հարսէ և  
փեսէ. — 6. Նուէրք նորածին մանկանց հա-  
մար. — 7. Նուէրք նորեկ բնակիչներէ. — 8.  
Վարժարանաց հասոյթին յաւելեալ մասը »:

Գ. — « Չունեորները ազատ են 5—7  
նուէրները տալ »:

ՅՕԴ. 38 ա. ի բարեփոխութեան մէջ  
արկղի մասին գրուած սահմանը աւելորդ է .  
արկղի ապրիւրներու մէջ յաւելեալ երկրորդ  
աղբիւրը խմբագրել այսպէս. « Կալուած և  
վազըֆ ունեցող թաղերու թաղային սնտուկի  
հաստ թից 40 % Ը, իսկ կալուած և վազըֆ  
չունեցողներու հաստ թից առնուաղն 2/3 Ը »:  
Վեցերորդ աղբիւրը որ ջնջել որոշուած է,  
պահել:

ՅՕԴ. 43 ա. — « Երոց դպրոցական պիտ-  
քերը ճրի կը հաղացուին» բառերը որք ջնջը-  
ւած են, պահել. նոյն Յօդուածի մէջ յաւել-  
եալ Գ. սորբ. տեղ հեռակեալ սորբերութիւ-  
նը դնել. « Թաղային ժողովը պէտք է ջանան  
դասական պիտոյից ծախքն ալ տրոց կամ թա-

չակաց վրոց յաւելուլ որպէսզի այդ պիտոյք ճրի  
մատակարարուին բոլոր աշակերտաց, իսկ ուր  
որ այդ յաւելումն ընկեանկարելի ըլլայ՝ դժու-  
րոցը ամէն դասական պիտոյք ունենալու և շու-  
կայի դնով տալու է »:

ՅՕԴ. 57 ա. պահել: — ՅՕԴ. 122 ա.  
Յրդ աղբիւրը որ ջնջուած է, պահել: — ՅՕԴ.  
185 Բ. փոխանակ ջնջելու՝ բարեփոխել  
« Թաղային ժողովը կրնան տեսուչ-վարժապե-  
տաց, ինչպէս և վարժապետաց ընտրութեան  
և սոճիլի վաւերացուլը իրենց վերապահել »:

ՅՕԴ. 208. — Յղուլը ( 185 Բ. ) ջնջել,  
ինչպէս որ որոշուած է, բայց սա սարբերու-  
թիւնը յաւելուլ. « Թաղային ժողովը կրնան  
միջին ուսումնարանի տեսչաց, ինչպէս և ու-  
սուցչաց ընտրութեան անմիջական վաւերա-  
ցումն իրենց վերապահել »:

ՅՕԴ. 211. — Յղուլը ( 185 Բ. ) ջնջել,  
բայց անոր տեղ 208 Բ. դնել:

ՅՕԴ. 327. — Բարեփոխել ստպէս. « 1.  
Յանուն ընդհ. աղբ. կրթութեան եղած կտակ-  
ներն ու նուէրները: 2. Յանուն ազգին եղած  
այն կտակներն ու նուէրներն, որք որոշեալ  
նպատակ կամ նպատակին համաձայն գործադ-  
րութիւն չունին: 3. Լուծեալ ընկերութեանց  
ստացուածքը: 4. Ժառանգութեանց վերա-  
բերեալ գործերու առթիւ պահանջելի նուէրք:  
5. Կեդր. կրթական արկեղ հաստ թից բաւեր-  
բորդ մասը »:

ՅՕԴ. 328. — Տր. թուոյն մէջ « վար-  
ժարան չունեցող » բառերը ջնջել:

ՅՕԴ. 352. — 1. Յանուն դաւառին ընդհ.  
կրթութեան եղած այն կտակներն ու նուէրներն.  
2. Յանուն դաւառին եղած այն կտակներն ու  
նուէրներն որք որոշեալ նպատակ կամ նա-  
տակին համաձայն գործադրութիւն չունին: 3.  
Ժառանգութեանց վերաբերեալ գործերու առ-  
թիւ պահանջելի նուէրք: 4. Գաւառական  
կրթական արկեղ հաստ թից 20 տ. մասը:



807. 353. — Ը շ. թուոյն մէջ « վար-  
ժարան չունեցող » բառերն ջնջել :

807. 360. Բ. — Փոխանակ ջնջել՝ րա-  
րեփոխել. « Բ. Գաւառական Ժողովր կը ան-  
ոյցելու տեսչաց, ինչպէս և անօրէնի (Յօդ. 337) սոճկի վաւերացումը իրենց վերադարձելը » :  
— Յօդ. 374 նոյնութեամբ սրահել և 375-րդ  
Յօդուածոյ մէջն ստրկի սրայմանը ջնջել.  
— 380-րդ Յօդուածին մէջ « Թաղական Խոր-  
հարդին » բառերը ջաւելցնել : 381-րդ Յօդուա-  
ծոյ և 386-րդ Յօդուածոյ մէջ « Ժողովր » բա-  
ռին տեղ « Խորհուրդ » բառը ջնջել :

Ասանք են, ահա, Մեծապատիւ  
Թորհրդական Էֆէնտի, անհամաձայնու-  
թեան տեղի տուող կէտերը : Այժմ հարկ  
կը համարիմ Ձեր ուշադրութեան յանձ-  
նել ծրագրին այն յօդուածները որք,  
թէ և միացեալ Դիւանաց կողմէ առանց  
բարեփոխութեան ընդունուած են, բայց  
կրնան բարեփոխիլ կամ ջնջուիլ : Համա-  
ռօտութեան համար միայն պատշաճ դա-  
տած բարեփոխութիւններս կը դնեմ  
կարգաւ առանց բարեփոխելի Յօդուա-  
ծոյ բնագիրը մէջ բերելու :

807. 1. — Թաղ սարտաւոր չեն ծաղ-  
կոց հիմնելու, բայց այն թաղն որ դեռ զըզ-  
րացական ստրկ չունեցող (Յօդ. 18 գ.) ման-  
կանց թիւը 20 ը կանցնի՝ կրնայ ծաղկոց ու-  
նենալ Թաղային Ժողովոյ սրտմամբ և կեդր.  
կամ Գաւառական Տեսչութեան հաւանու-  
թեամբ : — Յօդ. 3 և 6 ջնջել : — Յօդ.  
9. յաւելու « Սկզբունք իրազխութեան » :

807. 12. Բ. — « Իսկ եթէ 60ը անցնի՝  
երկու սրահի կը բաժնուի և խորարանչիւր սրահ  
մէկ դաստիարակուհի կունենայ » : Նոյն Յօդ-  
ուածին մէջ հետեւեալ պարբերութիւնն յա-  
ւելու. « Եթէ թաղը ընդարձակ է՝ բաժան-  
եալ սրահները պէտք է թաղին զանազան  
յարմարագոյն կողմերն հաստատուին » :

807. 13. — « Առ առաւելն օրը 4 ժամ »  
ըսելու տեղ, « օրը 3-4 ժամ » ըսել : — 25  
ա. « Եւ կրկնիչ վարժարան » բառերն յաւե-  
լու :

807. 25. գ. — « Թաղ մը այս սարտա-  
կա՛ց թիւններէն ազատ է՝ եթէ Թաղային Ժողո-  
վոյ սին մամբ և կեդր. կամ Գաւառ. կրթա-  
կան Տեսչ. կէտն հաւանութեամբ բարեզոր-  
ծական կամ մշտնաւոր (Յօդ. 169 և 174)  
վարժարանի մը սխմոցա կը հոգացուի խր  
մանկուոյն նախնակաւ կրթութիւնը օրինաց  
սրամադրութեանց համաձայն » :

807. 28. ա. — « Այն թաղն որ թէեւ  
ստորին դպրոց ունի, բայց օրինաց սրահանջած  
վիճակին մէջ չէ՝ իրաւունք չունի զայն բարձր.  
դպրոցի վերածելու » : — 28 Բ. — 31 Բ. 32  
— 34 և 38 Բ. ջնջել :

807. 47. Բ. ին մէջ փոխանակ « մու-  
րի տարը ալ կտանուի » ըսելու՝ « մուտքի չա-  
փաւոր տարը ալ կրնայ առնուիլ » ըսել :

807. 50. ա. (վերջին մասը) « Նոյն  
աղբը կրնեն և Հոգարարձուք օրինաց 49, 50  
Բ., 51, 52, 55 գ. դ. 57 ա. 58, 60, 63 և  
69 յօդուածներն ալ բացատրելով » :

807. 56 Բ. « Եթէ ճնողը մը չունեւո-  
րութեան սրածառաւ կարող չէ խըր զաւակը  
դպրոց գրկել՝ պէտք է ժամանակին իմացնէ  
Ղոյղ Եկեղեցոյանին, որ հարկ եղածը կը տնօ-  
րինէ (Յօդ. 351) » :

807. 58. — « Թաղային դպրոցին աւար-  
տական քննութեան ենթարկուին » ըսելու տեղ,  
ըսել « ամեն տարի թաղային դպրոցին տարեկան  
քննութեան ենթարկուին, եւ եթէ պահան-  
ջուած կրթութիւնը չունենան, թաղային  
դպրոց գրուին » :

807. 55 ին մէջ սրբրբերութիւն մը յա-  
ւելու, « Եթէ աշակերտ մը կէս օր բացակայ

ըլլայ՝ կամ երեք անգամ մէյմէկ քառօրդ  
ժամ ուշ գայ՝ մէկ ամբողջ բացակայութիւն  
կը հաշուուի, և, եթէ մինչև 3 օր արդարա-  
ցուցիչ բացատրութիւն չտրուի՝ բացակայու-  
թիւնը սպօրինի կը նկատուի, և երեք սպօ-  
րինի բացակայութենէ ետք՝ օրինաց 54. ա.  
Յօդուածի սրամադրութիւններն սատիճանա-  
բար ի գործ կը դրուին » : — Յօդ. 55. Գ.  
(վերջին մասին մէջ) արտօրոց կարգի բառերը  
յաւելու, և « այցելու տեսուչ » բառերուն  
տեղ « թաղային դասարանք » դնել :

807. 58 Ե. — « Հոգարարձուք և Եկե-  
ղեցոյանը պէտք է ուրիշ պատշաճուոր միջոց-  
ներով հոգան այդպիսի մանկանց կրթութիւնը՝  
եթէ տղբատ ճնողաց զաւակուհի են, և ծախ-  
քը թաղ. սնտուկէն կամ այլ եղանակաւ հո-  
գացուի » — 59 Բ. — ջնջել : 66ին մէջ աղ-  
դին և հայրենեաց » բառերը յաւելու :

807. 67. — Երդ թուոյն մէջ « և քաղա-  
քային կրթութիւնն բառերը յաւելու : — 68.  
ա. Յօդուածի Երդ թուոյն մէջ « սկզբունք քաղա-  
քային կրթութեան » և 10-րդ թիւին մէջ « սկզ-  
բունք առողջարանութեան » բառերը յաւելու :

807. 74 Բ. — Այն դասուաններն որ աշա-  
կերտը հայերէն չեն զխտեր, պէտք է ամէն  
ջանք ի գործ դրուի որ շուտով սովորին. բայց  
մինչև որ կարող ըլլան հայերէն դաստիա-  
սութենէն օգուտ քաղել՝ դասերը պէտք է մի-  
անգամայն աշակերտաց հասկցած լեզուաւ բա-  
ցատրուին » :

807. 75. Բ. — « 60 ի համին » ըսելու  
տեղ « 60 ը անցնի » ըսել. նոյն յօդուած Գ.  
պարբերութիւն « նմանապէս եթէ խորարան-  
չիւր սրահի աշակերտաց և աշակերտուհեաց  
թիւը 60 ն անցնի՝ խորարանչիւր կարգ զատ  
դասարան և խորարանչիւր դասարան մէկ  
ներքին վարժարան կամ վարժուհի կունենայ,  
իսկ եթէ դասարանի մի աշակերտաց և աշա-  
կերտուհեաց թիւը 40ն անցնի՝ զուղընթաց

դասարաններու կը բաժնուի, յորոց սակաւա-  
թիւը կրնայ օգնական վարժարանի կամ վար-  
ժուհեոյ յանձնուիլ » :

76 ա. (վերջին մասը) « Իսկ երկու  
բարձր կարգերը կրնան զատ զատ դասարան  
ունենալ՝ եթէ Ե. կարգը առնուաղն 20 և Զ.  
կարգը առնուաղն 10 աշակերտ և աշակեր-  
տուհի պարունակէ : Հակառակ սարագոյնի  
մէջ երկու կարգը մէկ դասարան և մէկ ներ-  
քին վարժարան կամ վարժուհի կունենայ » :  
Նոյն յօդուածոյ Բ. և Գ. սրբրբ. ջնջել : —  
Նոյն յօդուածոյ Գ. — « այդ սրբրբային մէջ »  
բառերուն տեղ ըսել « այցելու դասատուներ  
գտնուած դպրոցաց մէջ » և Ե. սրբրբերու-  
թեան վերջը յաւելու « և նոյնատեսակ ուս-  
մանց դասերը ըստ կարելոյն մէկ վարժարան  
տի յանձնուին » :

77 ա. ջնջել : — 82. Յաւելու « Եւ կը  
տեէ առնուաղն 44 շարաթ » : — 83 ա. « օր-  
ուան դասերը, ներքին վարժարանաց վերա-  
բերութեամբ կը տեւեն առ տոտեւն 6 և առ-  
նուաղն 5 ժամ, բայց մարմնամարդի յատկա-  
ցած ժամանակին, իսկ շարաթ (և ի հարկին և  
չորեքշաբթի) օրը՝ միայն 3-4 ժամ կէս օրէն  
առաջ կամ յետոյ » : — Բ. 00. տան դասերը  
երկու միջոցի կը բաժնուին, որոց մէջ ամա-  
ռը 2 ժամ, իսկ միւս եղանակներուն՝ 1 1/2-2  
ժամ, ինչպէս և խորարանչիւր դասէն ետք 10  
վոյրկեան հանդիստ կը տրուի » :

84 ի վերջին մասը « բայց պէտք է որ  
ստորին դպրոցի Ա. և Բ. կարգերը օրը 4 ժամ,  
Գ. և Դ. կարգերը 4-5, և բարձրագոյն զըզ-  
րոցի Ե. Զ. կարգերը 5 ժամ դասաւորութեան  
դրաղին » :

92. — « կրկնիչ կամ լրացուցիչ վար-  
ժարան պէտք է հաստատուի միայն այն թա-  
ղերուն մէջ՝ որ բարձր. դպրոց չկայ » :

115 ը ջնջել և անոր տեղ դնել « կր-  
րակնորեաց և երեկոցեան վարժարանները  
Կեղր. կամ Գաւառ. Տեսչութենէ վաւերացեալ  
ծրագիր և կանոնագիր ունենալու են » : —  
116. — Չնջել :

807. 117. ա. ին վերջը յաւելու. « Թա-  
ղային ժողովոց որոշմամբ և Կեղր. կամ Գա-  
ւառ. Կրթ. Տեսչութեան հաւանութեամբ » :  
Նոյն յողումոց բ. սարքերութիւնը ջնջել :

807. 118. — [ վերջին մասը ] « Եւ  
թաղ մ'որ թէ և ստորին ուսումնարան ունի ,  
բայց օրինաց պահանջած վիճակին մէջ չէ՝ չը  
կրնար գործնական դասարան [ Յօդ. 125 ] կամ  
միջին ուսումնարան [ Յօդ. 132 ] հիմնել » :

807. 125 բ. — « Ի պահանջել հարկին կր-  
նայ Գ. կարգ մ'ալ տւելնալ « Գործնական դա-  
սարան » անուամբ, գլխաւորապէս աշակերտաց  
համար » :

807. 126. — 2օդ. թուոյն մէջ յաւե-  
լու « և բաղարային [ կրթութիւն ] » . — 8օդ.  
թուոյն մէջ « սկզբունք վաճառագիտութեան » .  
9օդ. թուոյն մէջ « առողջարանութեան » . 13օդ.  
թուոյն մէջ « սկզբունք դաստիարակութեան » :

807. 128. — 7օդ. թուոյն մէջ « Ընդհ.  
պատմութիւն . — Կրկնում Գ. կարգի ընթաց-  
քին » . 8օդ. թուոյն մէջ « աշխարհագրութիւն  
— նոյնպէս » . 12օդ. թուոյն մէջ « կրկնում և  
և ընդարձակում Գ. կարգի ընթացքին » բա-  
ռերը , ինչպէս և 13-14 թիւերը ջնջել :

807. 129. ա. « Գործնական դասարանը  
երկու ճիւղի կը բաժնուի — վաճառականական  
և ճարտարական » : բ. սարք. մէջ յաւելու.  
« օտար լեզուներէ միոյն » բառերը : — Նոր  
սարքերութիւն յաւելու. « Աշակերտը կրնան  
միանգամայն ստորին ուսումնարանի Գ. կարգի  
դասերէն մի քանիին հետեւիլ հաւանութեամբ  
Տեսչին » :

807. 130. ա. — « Եթէ ճիւղի մը հե-  
տեւոյ աշակերտաց թիւը 8 էն նուազ ըլլայ  
նոյն ճիւղին յատկացեալ դասերը չեն աւան-  
դուիր » : բ. սարքերութիւն ջնջել : — 132 գ.  
ջնջել :

807. 133. — 7օդ. թուոյն մէջ յաւե-  
լու « սկզբունք բնախօսութեան և ընդհ. ա-  
ռողջարանութեան » :

807. 134 բ. — Յաւելու. « Յորոց մի-  
ոյն տեղ կրնայ մի ուրիշ լեզու աւանդուիլ ,  
ըստ տեղական պահանջմանց » :

807. 135 բ. ին մէջ 10 թիւը 8 ընել :

807. 136. գ. — Կեղր. Կրթ. Տեսչու-  
թեան արտօնութիւն կը տրուի օրինաց 126 ,  
128 և 133 յողումոց սահմանած ուսմանց ,  
ինչպէս և ճիւղերու կազմութեան մէջ տեղա-  
կան հանդամանաց պահանջած անհրաժեշտ  
փոփոխութիւնքն ընելու » : — 137 և 138  
ջնջել :

807. 140. ա. և բ. ին մէջ « տեղի կու-  
նենայ » բառերուն տեղ « կրնայ տեղի ունե-  
նալ » : Նոր սարքերութիւն մը յաւելու. « Ստո-  
րին ուսումնարանի աշակերտուհիները կրնան  
աշակերտներէն դատուիլ և ուրոյն դասարան-  
ներ ունենալ , եթէ աշակերտուհեաց թիւը առ  
նուազն 40 ի հասնի » :

807. 143. — Չնջել :

807. 145 ին մէջ յաւելու. « վեց սմ-  
սուան մէջ 10 սպորթի բացակայութիւն ու-  
նենայ և կամ » բառերը :

807. 147 և 148. — Չնջել : — 149  
ա. « հետեւելու » բառէն ետք յաւելու. « քոյց  
Տեսչը կրնայ ընդհ. ուսմանքներէն ապնուազն  
երկուքը և առ առաւելն չորսը սոցա համար տը  
սարտաւորիչ ընել » : — 151. — Չնջել :

807. 152 ա. — « Միջին ուսումնարա-  
նաց տարեկան և աւարտական քննութիւնները  
կը կատարեն և ըն. » : բ. և Գ. սարքերութիւն-  
ները ջնջել :

. 153. — « Առ առաւելն 6 ժամ »  
ըսելու տեղ « 5-6 ժամ » ըսել և բ. սարք.  
ջնջել : 154 բ. 156-163 ջնջել :

807. 164. — (սկիզբն) յաւելու « Վա-  
նօրէից վարժարաններն Կեղր. վարչութեան  
հաւանութեամբ կը հիմնուին և անոնց » բառերը :

807. 167. — « Վանական միարանու-  
թիւնը պէտք է ամէն տարի իրենց վարժարա-  
նաց հաշիւներն ու անոնց ներքին վիճակին  
տեղեկագիրը ներկայեն Կեղր. Կրթ. Տեսչու-  
թեան՝ Գաւառ. Կրթ. Տեսչութեանց միջոցաւ  
( Յօդ. 349 ) :

807. 169. Էն ետք հետեւեալ յողումն  
յաւելու. « Բարեգործական վարժարանը Կեղր.  
կամ Գաւառ. Կրթ. Տեսչութեան հաւանու-  
թեամբ կը հիմնուին , նոյն տեսչութեան հըս-  
կողութեան ներքե և են և իրենց ուսմանց ծրա-  
գիրն ու ներքին կանոնագիրը Կեղր. Կրթ.  
Տեսչութենէն կը վաւերանան ( Յօդ. 349 ) » :

807. 175. — « Եւ օրինաց պահանջած  
արտօնագիրն և ամեն մասնաւոր ընկերութիւն  
որ Կեղր. Կրթ. Տեսչութենէն վաւերացած է »  
բառերը ջնջել : — 176. — Չնջել : — 178 ին  
մէջ նոր սարք. յաւելու , « Քանի մը տեղե-  
րու դպրոցաց տեսչութիւնը կրնայ մէկ ար-  
տարին տեսչի յանձնուիլ համաձայնութեամբ  
Հոգարարմուաց եւ հաւանութեամբ Կեղր.  
կամ Գաւառ. Կրթական Տեսչութեան » :

807. 182 — « Տեղեկագիր » բառէն ա-  
ռաջ « Հոգարարմուէն վաւերացեալ » բառերը  
յաւելու :

807. 186-187. — « Վարժապետ »  
բառէն առաջ « ներքին » բառը յաւելու :

807. 187. ին տակ սարք. մը յաւելու .  
« Ստորին և բարձրագոյն դպրոցի արտաքին  
կամ այցելու դասատու կրնան լինիլ անոնք որ  
սահմանեալ մասնաւոր արտօնագիրն ( 298 )  
ունին » : — 194. — Չնջել :

807. 198 ին տակ նոր սարք. յաւելու.  
« Երկու օգնական աշակերտ կամ աշակերտուհի  
մէկ օգնական վարժապետի տեղ կրնան գոր-  
ծածուիլ » :

807. 200-202. — Չնջել և վերջնոյն  
տեղ դնել . « Օրինաց 178-181 Յողումոց  
տրամադրութիւնները ստորին և միջին ուսում-  
նարանի , իսկ 182 և 185 յողումոցը միայն  
ստորին ուսումնարանի տեսչաց կը վերաբե-  
րին » :

807. 203 ին սկիզբը « Միջին ուսում-  
նարանի » բառերը յաւելու , և վերջը « և  
պատճէնը այցելու Տեսչին կը հաղորդէ » բա-  
ռերը ջնջել : — 204 ին վերջը « կամ Հոգա-  
բարձուին » բառերը յաւելու : — 209 ջնջել :

807. 210. — « Ուսուցիչ » բառէն ա-  
ռաջ « ներքին » բառը և « արտօնագիր » բա-  
ռէն առաջ « ընդհանուր » բառը յաւելու :  
Նոյն յողումին տակ նոր սարք. յաւելու .  
« Նոյն ուսումնարանաց արտաքին կամ այցե-  
լու ուսուցիչ կրնան լինիլ անոնք որ սահման-  
եալ մասնաւոր արտօնագիրն ( Յօդ. 298 ) ու-  
նին » : Եւ անկէ ետք զստ յողում մը յա-  
ւելու . « Օրինաց 188օդ. յողումի տրամադ-  
րութիւններն ստորին ուսումնարանի ուսուց-  
չաց ալ կը վերաբերին » :

807. 212. ա. սարք. յղումը « 189 ի »  
տեղ « 185 բ. » ընել : — 212 բ. « Հինգե-  
րորդ » բառը « տասներորդ » ընել :

807. 220 Բ. (սկիզբը) « Միջին ուսումնարանի ուսուցչաց և » բառերը յաւելու :

807. 221. Յօդուածէն վերջ նոր Յօդ. մը յաւելու : « Երբ պաշտօն մը թափուր մնայ՝ և կարելի կամ պատշաճ չըլլայ անմիջապէս պաշտօնէի մ'անուանումն ընել՝ նախընթաց ա. և Բ. սարբ. համաձայն առժամանակեայ պաշտօնեայ մը կը նշանակուի, բայց սպառնալի առժամանակեայ անուանումները կրնան առ առաւելն մինչև մէկ տարի տեւել » :

807. 225. ա. և Բ. (միացնելով) « Օրինաց արամադրած պայմանաժամը (224) Արանայէ առաջ կարելի չէ պաշտօնեայ հրաժարեցնել : Ծանր անխախտութեան կամ յայտնի ապրկարութեան, ըմբոստութեան և գայթակղական վարուց պատճառաւ Հոգարարձուր կրնան այցելու տեսչաց կարծիքն անելէ յետոյ՝ պաշտօնեայ մը պաշտօնէն դադրեցնել. բայց սարսառք են նոյն տեսչաց միջոցաւ կամ ուղղակի տեղեկագրել անյատարազ կեղր. կամ Գաւառ. կրթ. Տեսչութեան որ ամբաստանեալն ալ լսելէ վերջ կուտայ իւր վճիռը » :

807. 227. Բ. (վերջը) « և վերջապէս խազա արգիւման » բառերը ջնջել :

807. 228 ին տակ սարբ. մը յաւելու : « Առաջին սարբերութեամբ արտօնեալ պաշտօններն ունեցող պաշտօնեայք սէտք է վարեն զայնս առանց իրենց կրթական պաշտօնին փաստելու » :

807. 229. ա. — « Ով որ առանց արտօնագիր ունենալու պաշտօն վարէ ազգ. վարժարանաց մէջ՝ անմիջապէս պաշտօնանկ կըլլայ և միանգամայն քննութիւն տալով արտօնագիր ստանալու իրաւունքէն կը զրկուի մէկէն մինչև երեք տարի. իսկ ով որ իւր ստանձնած պաշտօնին համար սահմանեալ ստախձանէն վար արտօնագիր ունենայ՝ օրինաց 227րդ յօդուածոյ Բ. սարբերութեան տրամադրութեանց ներքև կիցնայ » :

նէն վար արտօնագիր ունենայ՝ օրինաց 227րդ յօդուածոյ Բ. սարբերութեան տրամադրութեանց ներքև կիցնայ » :

Բ. — « Արտօնագրի » բառէն ետք յաւելու « կամ՝ պաշտօնին պահանջած աստիճանէն վար արտօնագիր ունեցող » բառերը և վերջի « մինչև որ արտօնեալ պաշտօնեայ մը գըտնուի » բառերը ջնջել :

807. 233 ին տակ սարբ. մը յաւելու : « Նմանապէս եթէ պաշտօնեայ մը 25—30 տարուան պաշտօնավարութենէ ետք իր կամօրը կամ կեղր. կրթ. Տեսչութեան որոշմամբ գործէ բաշտի՝ հանգստեան թոշակ կրնդուի նոյն անուակէն » :

807. 235 և 236 ջնջել : — 243 ին վերջը « առնուազն 4 և սա առաւելն 6 ամիս » ըսելու տեղ « առնուազն 4 ամիս » ըսել : — 261 և 266 ջնջել :

807. 231. — « կրթական պաշտօնէից յատաճիւրմութեան օգնելու համար ամեն տարի մանկավարժական և այլ ուսումնական խընդիրներ կատարելու անոնց և ներկայացուած գործոց համար գրամական մրցանակներ կը տրուին կեղր. կրթ. Տեսչութեան հրատարակելիք մրցանաց կանոնագրին տրամադրութեանց համաձայն » : — 272 « կամ գաւառական » բառերն յաւելու :

807. 237. — (վերջը) « Ընդ նախագահութեամբ այցելու տեսչին » բառերը յաւելու :

807. 236. — « Արտօնագիրը հինգ տարեկան ունին. Ա. ծաղկոցի, Բ. Ստորին դըպրոցի, Գ. բարձր դըպրոցի, Դ. ստորին ուսումնարանի, Ե. միջին ուսումնարանի, իւրաքանչիւր ստախձանի արտօնագիր տաժամանակեայ է և վերջնական, և Գ. Դ. Ե. ստախձանի արտօնագիրը միանգամայն երկու տեսակ են —

ընդհանուր և մասնաւոր » : — 299 ջնջել :

300. — « վերջնական արտօնագիր կը տրուի անոնց որ սահմանեալ քննութիւնը կատարեալ յաջողութեամբ կուտան և անոնց՝ որ առժամանակեայ արտօնագիր ստանալէ ետք 301 յօդուածի պահանջած վիսյագրերը կը ստանան » :

807. 301 և 302 ա. (միացեալ) « Առժամանակեայ արտօնագիր կը տրուի հինգ տարուան համար անոնց՝ որ սահմանեալ բնութիւնը գէթ գոնացուցիչ կերպով կուտան, բայց եթէ նոյն պայմանաժամի միջոցին տարին գէթ մէկ վիսյագիր շատանան այցելու տեսուչներէն՝ թէ արդիւնաւոր կերպով վարած են պաշտօնին՝ այնուհետև ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել չեն կրնար առանց վերստին քննութիւն տալ և արտօնագիր ստանալու » :

807. 302 Բ. ին սկիզբն յաւելու « միջին ուսումնարանաց ուսուցիչք նոյն վիսյագիրներն ստանալու են իրենց տեսուչներէն և հոգարարձուներէն » :

807. 305. — « կեղր. կրթ. Տեսչ. կրր նայ ի հարկին վերջնական արտօնագիր մը առժամանակեայի փոխել և բարձր. ստախձանի արտօնագիր մը ստորին ստախձանի թիւցնել » :

807. 307 Բ. « արտօնագիրները » բառէն առաջ « վերջնական » բառն յաւելու :

807. 315. — 10րդ թիւը և 316 ը ջնջել : — 317. « գործին » բառէն ետք « կը բըննէ և կը վաւերացնէ սոյն ընկերութեանց կանոնագիրն » յաւելու :

807. 324. ա. — « կեղր. կրթ. Տեսչ. պարտի մասնաւոր փոյթ տանիլ 1. կեղր. վարժարանաց, միջին ուսումնարան, մանկավարժական մաստէնդարան և թանգարան հիմնելու. — 2. Օրինաց պահանջած նախա-

կան կրթութիւնը հոգալու անկարող թաղերուն և կարօտեալ կրթական պաշտօնէից և անոնց ընտանեաց նպաստելու նպատակաւ երկու ընդհ. ընկերութիւն կազմելու, և 3. Մանկավարժական հանդէս մը, դասագրքեր, գրասկան այլ միջոցներ և մասնադարանաց համար պիտանի գրքեր հրատարակելու » : Բ. — « Նախընթաց սարբ. մէջ նշանակուած կրթական հաստատութեանց և ընկերութեանց կազմական կանոնագրերը սկտր է Ազգ. Ժողովոյ վաւերացման ենթարկուին » : — 325 ջնջել :

807. 326. — « կեղր. կրթ. Տեսչութիւնը ազգային կրթութեան ընդհանուր պիտոյից համար կուենայ սարբ. հաստատուն եկամուտ և արկ » :

807. 329 ին մէջ յաւելու « Ազգ. վարչութիւնը պարտի կրթական հաստատուններն անցնելու համար ամեն ջանք ի գործ դնել » :

807. 338. Բ. — « Գաւառական Ժողովը կրնայ տնօրէնի, ինչպէս և այցելու տեսչաց, (Յօդ. 360 ա.) ընտրութեան անմիջական վաւերացումը իրեն վերապահել : — 339. — ջնջել :

807. 342. ին մէջ յաւելու « Անկարող թաղերու և կարօտեալ կրթական պաշտօնէից նպաստելու նպատակաւ կազմուելիք ընկերութեանց (Յօդ. 324) ճիւղեր հաստատուին » : — Նոյն յօդուածի 4րդ. թիւն ջնջել և 7րդ. թիւոյն սկիզբը « Գաւառական ստորին կամ միջին ուսումնարան և » բառերն յաւելու : — 343 ը ջնջել :

807. 346. ա. ին վերջը « և իրենց քննութեանց արդիւնքը և ն. » բառերը և Բ. սարբերութիւնը ջնջել :

807. 347. ա. ին « գործան մէջ և աշնան սկիզբը կամ ամառուան արձակուրդի միջոցին » բառերը և նոյն յօդուածի Բ. սարբերութիւնը ջնջել : — 348 և 361 ջնջել :

807. 374. ին տակ սրբր. մը յաւելու  
 «Նիքէ քանի մը թաղ միասին մէկ դարոց ու-  
 նին» (Յօդ. 23) Թաղային ժողովք միացեալ  
 նիստերու մէջ կ'ընեն Հոգարարձուի ընտրու-  
 թիւնն, ինչպէս և դարոցին վերաբերեալ այլ  
 տնօրինութիւնները, և կամ իւրաքանչիւր ժո-  
 ղով ուրոյն Հոգարարձու կ'ընտրէ: Վերջին  
 պարագային մէջ Հոգարարձուք միանալով մէկ  
 Հոգարարձութիւն կը կազմեն և իւրաքանչիւր  
 Հոգարարձու համարատու կ'ըլլայ իր Թաղային  
 ժողովին:

807. 391. ին սկիզբն «Հոգարարձուք»  
 բառէն ետք յաւելու «ինչպէս և եկեղեցականք»  
 բառերը:

807. 392. Չնջել:

807. 397. ին մէջ «3 տիսն անգամ մը  
 ցուցակած և Գաւառ. կամ Կեղր. Կրթ. Տես-  
 չութեան» բառերը Չնջել: — 410 Չնջել: —  
 413 ին մէջ «երեք» բառին տեղ «սա առա-  
 ւելն հինգ» բառերը դնել:

807. 413. Բ. «Այդ վկայագիրն ստա-  
 ցողներն առժամանակեայ արտօրնագրոց յատ-  
 կացեալ իրաւունքները կը վայելեն» բայց, ե-  
 թէ ի վրանալ իրենց վկայագրի սրայմանածա-  
 մին, սահմանեալ քննութիւնը տալով արա-  
 նագիր չատանան՝ այնուհետև ազգ. վարժա-  
 րանաց մէջ սրաչտօն վարելու իրաւունքէն կը  
 զրկուին:

807. 415. — «Վկայագիրն ստանան»  
 բառերէն ետք եկող մասը Չնջել և անոր տեղ  
 դնել «ով որ ասոր հակառակ վարուի՝ Օրինաց  
 227 Բ. Յօդուածոյ տրամադրութեանց ներքե  
 կ'իյնայ»:

Այս բարեփոխմանց և ջնջմանց մէկ  
 մասը համաձայն է ծրագրի քննութեան  
 միջոցին տեղի ունեցած դիտողութեանց  
 և մեծ մաս մ'ալ խմբագրութեան կը  
 վերաբերի՝ թէ և շփոթութեանց տեղի  
 չտալու համար՝ լաւ համարեցի իբրև  
 բարեփոխութիւն նշանակել. ուստի կը  
 յուսամ թէ բոլորն ալ առանց դժուա-  
 րութեան կ'ընդունուին:

Ի վերջոյ պարտք կը համարիմ յա-  
 ւելու, Մեծապատիւ Խորհրդական Է-  
 ֆէնտի, որ կրթական օրինաց ծրագիրը  
 խմբագրութեան Դիւանին յղուելէ առաջ  
 մեզ յանձնուի, որպէս զի տեղի ունեցած  
 բարեփոխութեանց և ջնջմանց համաձայն  
 Յօդուածոց և Գլխոց նոր դասակարգու-  
 թիւն մ'ընելով յիշեալ Դիւանին ներկա-  
 յեմք:

Մնամ խորին յարգանքք

Հ. Իփեքեան

Կ. Պօլիս 20 Մայիս 1881

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Կրօնական գործոց խորհրդական Գեր. Տ. Սիմօն Եպիսկոպոս Սէֆէրեան  
 ներքին գործոց » Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան, Արեւոյշ  
 Յարաբերական գործոց » Միքայէլ Մամեան  
 կրթական » Միքայէլ Մամիկոնեան  
 Դատական » Սերոփէ Աղնաւորեան  
 Տնտեսական » Գարեգին Մէլիք Արեւոյշ

ԿՐՕՆԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոս Սերոփեան  
 » Տ. Գարեգին Վարդապետ Թաթարեան  
 » Տ. Յակոբ » Փափաղեան  
 » Տ. Յովհաննէս Քահանայ Հիւնքեարապէյէնեան  
 » Տ. Սահակ » Տէր Սարգիսեան

ԲԱՂԱՔԱՅԻՆ ԱՏԵԱՆ

Աղէքսանդր Էֆէնտի Մէրեմ—Գուլի  
 Թովմաս » Խօրասանեան  
 Կարապետ » Շահպաղ  
 Պապի » Պապօեան  
 Սենեքերիմ » Մանուկեան

